ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Փաստաթղթի բնույթը՝ **հրապարակային**

- Ժամկետը՝ **2018 - 2020թթ.**[1]

- Հաստատման ամսաթիվը՝ **05.03.2019թ.**

- Նախորդ ճանապարհային քարտեզի թարմացում՝ **այո (առաջին ճանապարհային քարտեզը պատրաստվել էր 2014 -2017թթ. ժամանակաշրջանի համար)**

- Հաստատեցին՝ **ԵՄ պատվիրակության ղեկավարը, ինչպես նաև Երևանում ԵՄ անդամ պետությունների դեսպանները**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն փաստաթղթում ներկայացվում է **Հայաստանի քաղաքացիական հասարակության ներգրավման 2018-2020թթ. ԵՄ ճանապարհային քարտեզը** (այսուհետ՝ ճանապարհային քարտեզ): Այն ընդգրկում է քաղաքացիական հասարակության գործունեության և միջավայրի համառոտ վերլուծությունը, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) առաջ ծառացած մարտահրավերները, ինչպես նաև վերհանում Հայաստանի քաղաքացիական հասարակության ներգրավման հետ կապված ԵՄ գերակայությունները և միջոցառումները:

Ճանապարհային քարտեզը սահմանում է ՔՀԿ-ների հետ ԵՄ համագործակցության միջնաժամկետ (մինչև 2020թ.) նպատակները և ներառում երկխոսություն, տեխնիկական ու ֆինանսական աջակցություն: Այն համահունչ է 2017-2020թթ. Միասնական աջակցության շրջանակով (ՄԱՇ) սահմանված քաղաքացիական հասարակության աջակցության նպատակներին, ինչպես նաև Միասնական աջակցության շրջանակի հիմքում ընկած գերակայություններին, որոնք սահմանվել են Հայաստանում ԵՄ անդամ պետությունների կողմից համատեղ վերլուծության արդյունքում: Ճանապարհային քարտեզն առաջնորդվում է Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրում (ՀԸԳՀ) ամրագրված քաղաքականության նպատակներով, ԵՄ-Հայաստան համագործակցության գերակայություններով, ինչպես նաև Ռիգայի գագաթնաժողովում վերհանված գերակայություններով՝ «2020թ. 20 առանցքային արդյունքները»: Վերանայված ճանապարհային քարտեզն արտացոլում է նաև ԵՄ երկկողմ և ոլորտային ֆինանսական աջակցության պլանավորման տեսանկյունները:

Ճանապարհային քարտեզը վերանայվել է 2018թ.-ի հունիսից մինչև դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում Հայաստանում տեղի ունեցող դինամիկ քաղաքական զարգացումների և ընտրական գործընթացների համատեքստում: Հայաստանում տեղի ունեցող քաղաքական փոփոխությունները հույս են ներշնչել, որ քաղաքացիական հասարակությունը կարող է փոփոխությունների խթան հանդիսանալ, և նպաստավոր պայմաններ են ստեղծվել տեղական ՔՀԿ-ների համախմբման և ԵՄ-ի ու նրա անդամ պետությունների հետ համագործակցության ընդլայնման համար: Նոր ճանապարհային քարտեզի քննարկումների մասնակիցները հավատացած են, որ ստեղծվել է հնարավորություն քաղաքացիական հասարակության և (նոր) կառավարության միջև համագործակցության ընդլայնման համար: ՔՀ համագործակցության նոր ձևերը պետք է համատեղվեն

[1] Ճանապարհային քարտեզների նորացման գործընթացը մեկնարկել է 2018թ.-ի ապրիլին Եվրոպական հանձնաժողովի և Եվրոպական արտաքին գործողությունների ծառայության կողմից: Սկսած 2018թ.-ի հունիսից մինչև սեպտեմբեր՝ ԵՄ պատվիրակությունը նախաձեռնել է լայնամասշտաբ քննարկումներ ԵՄ անդամ պետությունների և հայաստանյան ՔՀԿ-ների հետ, որից հետո անցկացվել են թեմատիկ երկկողմ հանդիպումներ առանձին ՔՀԿ-ների հետ: Ելնելով քաղաքական զարգացումներից (այդ թվում՝ 2018թ.-ի դեկտեմբերի արտահերթ խորհրդարանական ընտրությունները) և ՔՀԿ-ների դերակատարման փոփոխություններից՝ ճանապարհային քարտեզի հաստատումը հետաձգվել է մինչև 2019թ.-ի սկիզբ:

քաղաքացիական հասարակության ներկա օրակարգի հետ, որը ներառում է կոռուպցիայի դեմ պայքարը, շրջակա միջավայրի պահպանությունը, կրթության և առողջապահության համակարգերի բարելավումը, արդարադատությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը: Հայաստանի քաղաքական համակարգի փոխակերպմանը և ԵՄ-Հայաստան համագործակցության խորացմանը նպաստելու համար խիստ կարևոր է, որ քաղաքացիական հասարակությունն ակտիվորեն ներգրավված լինի քաղաքականությունների մշակման և կառավարման բարեփոխումների իրականացման գործընթացներում: Միևնույն ժամանակ, Հայաստանի քաղաքացիական հասարակության արդյունավետ ու կառուցվածքային մասնակցությունը երկկողմ և բազմակողմ գործընթացներին շատ կարևոր է Հայաստանում Արևելյան գործընկերության նպատակների իրականացման համար: Վերջինս արդյունավետ իրագործելու համար ճանապարհային քարտեզում առաջարկվում է քաղաքացիական հասարակության լայն շերտերի (այդ թվում՝ Հայաստանի և ԵՄ-ի ՔՀԿ-ների), արհմիությունների, սոցիալական ուղղվածություն ունեցող ձեռնարկությունների, ոչ ֆորմալ քաղաքացիական խմբերի և ԶԼՄ-ների ներկայացուցիչների մասնակցությունը:

Ճանապարհային քարտեզը «կենդանի» փաստաթուղթ է և կարող է վերանայվել (իրականացման ժամկետի ընթացքում առնվազն երկու անգամ)՝ ելնելով պահանջների փոփոխությունից, քաղաքաիրավական դաշտից և քաղաքացիական հասարակության հեռանկարներից: Հետևաբար, սահմանված գերակայությունների և միջոցառումների ցանկը չպետք է դիտվի որպես ընդգրկուն և անփոփոխ, այլ պետք է ուղղորդիչ դեր կատարի քաղաքացիական հասարակության ներգրավման գործընթացում:

ՄԱՍ I . ԻՐԱՎԻՃԱԿԻ ԵՎ ԱՆՑՅԱԼՈՒՄ ԵՄ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

- ### ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ. ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՐՋԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿԸ

Ի տարբերության քաղաքացիական հասարակության ներգրավման նախորդ ժամանակաշրջանին՝ Հայաստանի քաղաքացիական հասարակության վիճակը **բարելավվել է**: Առաջընթաց կա մի քանի հարթություններում, այդ թվում՝ նպաստավոր պայմանների առկայություն, կազմակերպական կարողություններ, ոլորտային ենթակառուցվածքներ: 2018թ.-ի ժողովրդավարության ցուցիչի համաձայն[2]՝ Արևելյան Եվրոպայի «հիբրիդային ռեժիմ» դասակարգմամբ բոլոր երկրների շարքում 2018թ.-ին Հայաստանը գրանցել է ժողովրդավարության ցուցիչի առավելագույն բարելավում՝ 4.79 (2017թ.-ին՝ 4.11) և 111-րդ հորիզոնականից իջել է 103-րդ հորիզոնական: Ըստ 2017թ.-ի ԱՄՆ ՄԶԳ ՔՀԿ կայունության ցուցիչի[3]՝ ՔՀԿ-ների ընդհանուր կայունությունը գնահատվել է 3.7 միավոր (թեթևակի բարձր է 2016թ.-ի 3.8 և 2015թ.-ի 3.9 միավորներից), որը ցույց է տալիս դանդաղ և կայուն առաջընթաց:

Ըստ Արդարադատության նախարարության, 2018թ.-ի վերջի դրությամբ, Հայաստանում գրանցված են 4222 հասարակական կազմակերպություններ, 1120 հիմնադրամ, 244 ընկերակցություն (իրավաբանական անձանց միություններ): Տարբեր գնահատումների համաձայն՝ գրանցված կազմակերպություններից ակտիվ են միայն 15-20%-ը (կամ առավելագույնը 700-800-ը): Ինչպես Արևելյան գործընկերության մյուս երկրներում, Հայաստանում նույնպես **աճում է քաղաքացիական ակտիվությունը**: Բազմաթիվ ոչ ֆորմալ քաղաքացիական ակտիվիստներ մեծ դեր են խաղացել հասարակական բողոքի ակցիաների նախաձեռնման և կազմակերպման գործում, որը բերեց 2018թ.-ի թավշյա հեղափոխության, և այնուհետև ընդգրկվել նոր կառավարության կազմում: Վերջինս կարող էր

[2] http://www.eiu.com/Handlers/WhitepaperHandler.ashx?fi=Democracy_Index_2018.pdf&mode=wp&campaignid=Democracy2018

[3] https://www.fhi360.org/sites/default/files/media/documents/resource-civil-society-organization-2017-regional-report.PDF

ազդել համապատասխան ՔՀԿ-ների կառավարման վրա, սակայն նաև հնարավորություն տալ իշխանության արագ կամ անցնցում անցման:

Հայաստանի ՔՀԿ-ները հիմնականում ներգրավված են հասարակական իրազեկվածության մակարդակի բարձրացման (88%), կարողությունների զարգացման (86%), խորհրդատվության (72%) և ծառայությունների մատուցման (63%)[4] հետ առնչվող գործողություններում: Ինչ վերաբերում է գերիշխող ոլորտային շեշտադրմանը, ակտիվ ՔՀԿ-ները մեծամասամբ կենտրոնացած են կրթության (77%), համայնքային զարգացման (68%), երեխաների, երիտասարդների (67%) և մարդու իրավունքների պաշտպանության (54%) ոլորտների վրա[5]: Ոչ ֆորմալ խմբերը զբաղվում են կոնկրետ հարցերով, այդ թվում՝ շրջակա միջավայրի պահպանություն, մշակութային արժեքների պահպանություն, սպառողների իրավունքների պաշտպանություն, աշխատանքային իրավունքների և մարդու իրավունքների պաշտպանություն: Չնայած հայ հասարակության մեջ անհավասարության բարձր մակարդակին և գյուղական բնակավայրերում հանդիպող ծանր իրավիճակներին՝ **չկա ոչ մի ՔՀԿ, որը կոնկրետ զբաղվում է աղքատության հաղթահարման հարցերով**, և սակավաթիվ կազմակերպություններ են, որ իրականացնում են շահերի պաշտպանություն նշված բնագավառում:

Երևանի և Հայաստանի այլ մարզերի ՔՀԿ-ների կարողությունների միջև կա **խիստ անհամաչափություն**: Մարզերի ՔՀԿ-ները հիմնականում չունեն ռազմավարական տեսլական որոշումների կայացման և գործողությունների համար, ինչպես նաև չունեն կազմակերպության գործունեության շարունակականության ապահովման կարողություն: Մարզերի ՔՀԿ-ներից շատերը նաև չունեն ռազմավարական պլանավորման և տեխնիկական գիտելիքներ, հաշվետվության և ֆինանսական կառավարման կարողություններ: Այնուամենայնիվ, քաղաքացիական հասարակության ներգրավման նախորդ ժամանակաշրջանում Հայաստանի մարզերում, հատկապես հանրապետության հյուսիսային և հարավային շրջաններում, **աճել է** ուժեղ և տեսանելի կազմակերպությունների թիվը[6]: Հայկական սփյուռքում կան բազմաթիվ ուժեղ կազմակերպություններ: Նրանք սովորաբար կենտրոնացած են բարեգործության և ազգային ինքնության հիմնախնդիրների շուրջ: Այդ կազմակերպություններից մի քանիսը պարբերաբար երկխոսության մեջ է եղել կառավարության հետ, սակայն քաղաքացիական հասարակության լայն շերտերի հետ համագործակցությունը մինչև վերջերս եղել է սահմանափակ, որը հաճախ հանգեցրել է անհամաձայնեցված և մրցակցող նախաձեռնությունների: Վերջին տարիներին սփյուռքի որոշ կազմակերպություններ վերաձևակերպել են իրենց ռազմավարությունը և այժմ ձգտում են ուժեղացնել համագործակցությունը քաղաքացիական հասարակության հետ:

Քաղաքացիական հասարակության արդյունավետ ներգրավման կարևորագույն մարտահրավերները հիմնականում համատեղելի են նախորդ Ճանապարհային քարտեզում նշված մարտահրավերների հետ: Դրանք են՝ շահառուների և հասարակության լայն շերտերի հետ **կարևոր կապի բացակայությունը**, ընդհանուր **վստահության պակասը** և քաղաքացիական հասարակության շրջանում **կարողությունների զարգացման բացակայությունը,** ինչպես նաև **ներքին կառավարման և հաշվետվողականության խնդիրները:** Գործառնական մակարդակում որպես կարևորագույն մարտահրավեր շարունակում է մնալ **ֆինանսական կայունության բացակայությունը**: Շատ քիչ կազմակերպություններ կան, որ ունեն կայուն եկամուտ և ռազմավարական գործընկերներ, որոնց վրա կարող են հենվել: ՔՀԿ-ների մեծ մասը, հատկապես մարզերի նորաստեղծ կազմակերպությունները, նշանակալի արգելքների են հանդիպում

[4] Համաձայն Հայաստանում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների զարգացման կարիքների գնահատման արդյունքների, որն իրականացվել է 2018թ.-ի հոկտեմբերին «Ավելի հզոր քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, ավելի հզոր Հայաստան» ծրագրի շրջանակում: http://www.civilsociety.am/resources/strongsco//pubs/d0459dcd0777af3c7d8fff58c9948c2e.pdf

[5] Ibid.

[6] Օրինակ, կան ավելի քան 15 հզոր և տեսանելի կազմակերպություններ Շիրակի, Լոռու, Սյունիքի մարզերում: ՔՀԿ-ների քանակը, ընդհակառակն, քիչ է Արարատի, Արագածոտնի, Կոտայքի մարզերում, որոնք աշխարհագրականորեն ավելի մոտ են Երևանին:

իրենց առաքելությունների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ստեղծման և պահպանման ճանապարհին:

ՔՀԿ-ների ընդհանուր հանրային պատկերը **մի փոքր բարելավել է** [7] , և քաղաքացիական հասարակության շատ դերակատարներ ավելի մեծ ուշադրության և տեսանելիության են արժանացել թավշյա հեղափոխության արդյունքում: Տեղական համայնքային կազմակերպությունները հակված են ավելի մեծ վստահություն վայելելու հասարակության լայն զանգվածների շրջանում (քան ֆորմալ, կապիտալով հիմնված ՔՀԿ-ները), քանի որ կա ընկալում, որ նրանք ավելի արագ են կարողանում արձագանքել իրենց համախոհների պահանջներին:

Գոյություն ունեն ազգային մակարդակով համագործակցության մի քանի հարթակներ և ՔՀԿ-ների կոալիցիաներ, որոնց շարքում կարևոր դեր է կատարում **Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմը**: Ունենալով իրավական կարգավիճակ, գործող քարտուղարություն, 260 հայաստանյան ՔՀԿ-ների անդամություն (2019թ.-ի հունվարի դրությամբ)՝ Պլատֆորմը շարունակում է մնալ ԵՄ կարևորագույն գործընկերներից մեկը, որը խթանում է Հայաստանում Արևելյան գործընկերության նպատակների և ԵՄ-Հայաստան համագործակցության գերակայությունների իրականացումը: Անցած մի քանի տարիների ընթացքում ակտիվ են եղել նաև տարբեր ոլորտային կոալիցիաները, այդ թվում՝ Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման կոալիցիան, Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության կոալիցիան, Երեխաների պաշտպանության ցանցը, Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիան և Գյուղատնտեսական դաշինքը: ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակում իրականացված հետազոտության [8] արդյունքում վերհանվել են **ՔՀԿ-ների կոալիցիաների հետ կապված մի քանի մարտահրավերներ**, այդ թվում՝ռազմավարական տեսլականի բացակայությունը, համակարգման և կառավարման խնդիրներ, ֆինանսական խնդիրներ, պետական քաղաքականության մշակման կարողությունների պակասը, որն անհրաժեշտ է շահերի պաշտպանության իրականացման համար:

Ի վերջո, իրավիճակին նայելով ավելի լայն տեսանկյունից, Հայաստանը բարձր ռիսկային տարածք է՝ երկրաշարժերի և ատոմակայանի հնարավոր վթարների առումով: Վերջին տարիների ընթացքում քաղաքացիական հասարակության դերակատարները զարգացրել են իրենց կարողությունները՝ կապված բնական և մարդածին աղետների պատրաստվածության հետ, և նպաստել ընդհանուր պատրաստվածության մակարդակի բարձրացմանը: Հայաստանի և Ադրբեջանի միջև չկարգավորված ղարաբաղյան հակամարտությունը, ինչպես նաև Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական վեճը, որ կապված է հայերի ցեղասպանության ճանաչման հետ, մեծ ազդեցություն են ունեցել ազգային և տարածաշրջանային մակարդակներով քաղաքացիական հասարակության գործողությունների վրա: Դրանք նաև խստորեն սահմանափակում են մարդկային շփումը, ինչպես նաև ընդհանուր տեղեկատվության փոխանակումը հայաստանյան քաղաքացիական հասարակության ակտիվիստների և վերոնշյալ երկրներում նրանց գործընկերների միջև: Ընթացիկ հակամարտությունը նաև սահմանափակում է հանրային հաշվետվողականությունը, օրինակ, անվտանգության ոլորտի գործունեության հանդեպ: Հաշվի առնելով հակամարտության և երկու փակ սահմանների ազդեցությունը՝ ԵՄ-ն նախկինում պաշտպանել է ժողովուրդների փոխադարձ նախաձեռնությունները՝ ուղղված հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը և հակամարտության խաղաղ կարգավորմանը, որը կշարունակի անել նաև քաղաքացիական հասարակության ներգրավման հաջորդ ժամանակաշրջանում:

[7] Վերջին ոչ պաշտոնական հարցումների համաձայն

[8] Հրապարակված չէ և, ըստ պահանջի, կարող է ձեռք բերվել Հայաստանում ԵՄ պատվիրակությունից:

ՔՀ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՆՊԱՍՏԱՎՈՐ ՄԻՋԱՎԱՅՐ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ, ՔՀԿ-ՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քաղաքացիական հասարակության ներգրավման **նպաստավոր միջավայրի ստեղծման առումով դրական զարգացումներ** են տեղի ունեցել: Հասարակական կազմակերպությունների մասին ՀՀ օրենքը, որ մշակվեց 2016թ.-ին քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությամբ, հեշտացնում է ՔՀԿ-ների գրանցման գործընթացը և հնարավորություն է տալիս եկամուտ ստեղծելու տնտեսական գործունեության արդյունքում, ինչպես նաև կամավորների ներգրավելու կազմակերպության աշխատանքներում: Նպաստավոր միջավայրի ստեղծման համար հիմնականում կա սահմանված իրավական դաշտ, սակայն պետք է **աշխատել դրա կիրարկումն ապահովելու ուղղությամբ** (օր.՝ տեղեկատվության հասանելիության ապահովում, քաղաքականության մշակման գործընթացում քաղաքացիական հասարակության վաղ ներգրավում, *Actio Popularis* հասկացության ընդլայնում): Լրատվամիջոցների բազմազանությունը ևս նկատելի է, սակայն **տեղեկատվության հասանելիությունը** (ներառյալ ԶԼՄ-ների սեփականատերերի վերաբերյալ ճշգրիտ ու թարմ տեղեկատվության առկայությունը) և **վերջին տարիներին կեղծ տեղեկությունների և առցանց ապատեղեկատվության աճը** դեռևս մեծ մտահոգությունների տեղիք են տալիս:

Չնայած դրական փոփոխություններին՝ **անհավասարություն կա** դեռևս այն ՔՀԿ-ների և քաղաքացիական ակտիվիստների նկատմամբ, որոնք աշխատում են ամենախոցելի կամ մարգինալացված խմբերի, այդ թվում՝ անապահով ընտանիքների և գյուղական բնակավայրերի կանանց և երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց, ԼԳԲՏԻ (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, ինտերսեքս) անձանց և բանտարկյալների իրավունքների պաշտպանության ուղղությամբ: ԼԳԲՏԻ խմբերը և նրանց իրավապաշտպանները հաճախ թիրախավորվում են ատելության խոսքով, անարգանքով, բռնությամբ և իրենց աշխատանքում հանդիպում խոչընդոտների: Անկախ մամուլը, ոչ ֆորմալ քաղաքացիական խմբերը և կանանց իրավունքները պաշտպանող ակտիվիստները նույնպես հաճախ դառնում են զրպարտության կամ բանավոր հարձակումների առարկա: Մեծ սպասելիքներ կան, որ 2019թ.-ին խտրականության դեմ պայքարի օրենսդրության ընդունումից հետո նոր կառավարությունն ավելի ուժեղ դիրքորոշում կընդունի նշված ուղղություններով աշխատող ՔՀԿ-ների և անհատների իրավունքների պաշտպանության նկատմամբ:

Դրական միտումներ են արձանագրվել **կամավորության** զարգացման առումով, սակայն հանրային ներգրավվածությունը դեռևս փոփոխական է, և ՔՀԿ-ների շրջանում **այնքան էլ ընդունված չէ կամավորության նկատմամբ կառուցվածքային մոտեցումը**: 2018թ. Համաշխարհային բարեգործական ցուցիչի համաձայն՝ Հայաստանում հարցվողների 23%-ն է 2017թ.-ին մասնակցել կամավորական աշխատանքի: 2016թ.-ին ՀԿ-ների մասին օրենքում կամավորության վերաբերյալ դրույթների սահմանումը փոքր քայլ էր, որը ՀԿ-ներին հնարավորություն տվեց ներգրավելու կամավորների: Այնուամենայնիվ, ներկայում դեռևս չկան այդ դրույթների գործնական կիրարկման մեխանիզմներ:

ՔՀԿ-ների և կառավարության միջև **քաղաքական երկխոսությունը** սահմանափակվել է առանձին նախարարություններին և գործադիր կառույցներին կից հանրային խորհուրդներով, որը շատ դեպքերում լայն հնարավորություն չի տվել կարծիքների արտահայտման համար: Նոր կառավարությունից ակնկալվում է **էականորեն փոխել ՔՀԿ-ների հետ համագործակցության քաղաքականությունը**: Չնայած 2018թ.-ին մեկնարկել են խորհրդատվական քննարկումներ մի շարք ոլորտներում՝դեռևս պետք է զարգացնել ՔՀԿ-ների լայն շրջանակի և, ընդհանրապես, քաղաքացիների հետ կառուցվածքային համագործակցությունը: Մի շարք դրական քայլեր արդեն ձեռնարկվել են, օր.՝ 2018թ.-ի կեսերին ընտրական բարեփոխումների մշակման միջգերատեսչական աշխատանքային խմբում ՔՀԿ-ների փորձագետների ներգրավումը կամ քաղաքացիական շահերի պաշտպանության նոր և ազատ հնարավորությունների ընձեռումը: Ներկայում չկան համակարգված, կառուցվածքային մեխանիզմներ, որոնք կերաշխավորեն քաղաքականության մշակման բնագավառում ՔՀԿ-ների և կառավարության միջև փորձի փոխանակումը: Լրամշակման կարիք կա հետևյալ բաղադրիչների կապակցությամբ՝ համակարգային և ներառական մեխանիզմ որոշումների կայացման գործընթացում

ՔՀԿ-ների մասնակցության ապահովման համար (ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական կառավարման մակարդակներում), համակարգային մոտեցում օրենքների կիրարկման վերահսկման և հաշվետվողականության համար, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման վերահսկման համակարգ:

ԵՄ-Հայաստան համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ) տրամադրում է կարևոր **հարթակ քաղաքական երկխոսության մեջ քաղաքացիական հասարակության դերի ամրապնդման և Համաձայնագրով նախատեսված բարեփոխումների ընթացքի վերահսկման համար**: Ենթադրվում է, որ քաղաքացիական հասարակությունը պետք է կարևոր դերակատարություն ունենա ոչ միայն ՀԸԳՀ-ի իրականացման աջակցման, այլ նաև վերջինիս մոնիթորինգի գործընթացում: Այդ առումով, նախապատրաստական աշխատանքներ են ընթանում հայաստանյան և եվրոպական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար ԵՄ-Հայաստան երկկողմ ներկայացուցչական հարթակի ստեղծման ուղղությամբ:

Տեղական մակարդակում քաղաքական երկխոսության հիմնական խոչընդոտներն են՝ տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և պետական կառավարման մարմինների կարողությունների ցածր մակարդակը, որոշումների կայացման գործընթացին մասնակցելու իրավունքների մասին իրազեկվածության ցածր մակարդակը և Հայաստանում տեղական կառավարման մարմինների (մինչ օրս) սահմանափակ իշխանությունը:

Նախորդ ճանապարհային քարտեզի շրջանակում Հայաստանի ՔՀԿ-ների համար **ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվել են կարողությունների զարգացման տարբեր միջոցառումներ** [9]: Չնայած մի շարք ուղղություններով գրանցված առաջընթացին՝ կարողությունների զարգացումը երկարաժամկետ ջանքեր է պահանջում: Վերջերս (2018թ.-ի երկրորդ կեսին) իրականացված հետազոտությունները ցույց են տալիս, որ շատ ՔՀԿ-ներ պետք է կամ **ցանկանում են բարելավել իրենց տեխնիկական փորձը, ներքին կառավարումը և ֆինանսական կայունությունը**: Նոր ճանապարհային քարտեզի շուրջ խորհրդատվական հանդիպումների ընթացքում ՔՀԿ-ները խնդրեցին մասնավորապես աջակցել հետևյալ ուղղություններով՝ ֆինանսական կառավարում և կայունություն, ՔՀԿ-ների և կազմակերպության մարդկային ռեսուրսների կառավարում, սոցիալական ձեռներեցության հմտություններ, օրենսդրական փաստաթղթերի մշակում, օրենսդրական դաշտի կիրարկման վերահսկում, մարդու իրավունքների պաշտպանություն, ներառյալ հանդուրժողականությունը և գենդերային հավասարությունը, ինչպես նաև հաղորդակցման հմտություններ ու լեզուների իմացություն: 2018թ.-ի հոկտեմբերին «Ավելի հզոր քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, ավելի հզոր Հայաստան» ծրագրի շրջանակում իրականացված ուսումնասիրության արդյունքում սահմանվել են հետևյալ երեք գերակայությունները՝ ֆինանսական միջոցների հայթայթում, ծրագրերի մշակում և նորարարություն (վերջինս նոր դիտարկում և շեշտադրում է Հայաստանի ՔՀԿ-ների շրջանում): Բացի դրանից՝ մի քանի դոնորներ և երիտասարդ ակտիվիստներ նշել են, որ քաղաքացիական հասարակության ներգրավման հաջորդ ժամանակաշրջանի **գերակայությունների շարքում** պետք է դիտարկել **նոր, վերափոխական ՔՀԿ-ների կառավարման կարողությունների խթանումը**:

[9] Ներառյալ ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող՝ կարողությունների զարգացմանն ուղղված երեք խոշոր ընթացիկ ծրագրերը: Դրանք են՝ «Ավելի հզոր ՔՀԿ-ներ, ավելի հզոր Հայաստան» ծրագիրը, «ՔՀԿ կամուրջ» ծրագիրը և «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը:

ԵՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՔՀԿ-ՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ

Հայաստանում ՔՀԿ-ները **հավասարապես ներգրավված չեն** ԵՄ համագործակցության բոլոր գերակա ոլորտներում [10] : Քաղաքացիական հասարակությունն առավելապես գործում է **կառավարման, ինստիտուտների և մարդու իրավունքների** բնագավառներում: Գիտակցելով քաղաքացիական հասարակության կարևոր դերը Հայաստանի ժողովրդավարացման գործընթացում՝ ԵՄ պատվիրակությունը նախատեսում է 2019-2020թթ.-ին այդ ոլորտում **ընդլայնել ՔՀԿ-ների հետ համագործակցությունը**: ԵՄ-ի աջակցության **կարևոր ուղղություններից մեկը կլինի ներառական և մասնակցային որոշումների կայացումը**, որտեղ ԵՄ-ն կպահպանի ուժեղ քաղաքական աջակցությունը և կօժանդակի տարբեր մեխանիզմների միջոցով: ԵՄ-ն կձգտի ամրապնդել քաղաքացիական հասարակության դերը քաղաքական երկխոսության և կառավարման բարեփոխումների մշակման, ինչպես նաև արդարադատության ապահովման գործում (ներառյալ դատարանի որոշումների իրականացման, բանտային պայմանների, նախկին բանտարկյալների վերականգնման և ինտեգրման, ինչպես նաև դատական համակարգում կադրերի հավաքագրման և նշանակումների կատարման նկատմամբ վերահսկողությունը): ՔՀԿ-ներն ակտիվորեն աջակցել են մարդու իրավունքների պաշտպանության և արդարադատության ոլորտներում ԵՄ-Հայաստան քաղաքական երկխոսություններին, որը ԵՄ-ն դիտում է որպես հնարավորություն նշված ոլորտներում հետագա բարեփոխումների իրականացման համար: **Աջակցության մեկ այլ կարևոր ուղղություն** կլինի **ՔՀԿ-ների և տեղական կառավարման մարմինների միջև երկխոսության** ամրապնդումը:

ՔՀԿ-ներն օժանդակել են **«տնտեսական զարգացման և շուկայական հնարավորությունների»** բնագավառում նպատակների իրականացմանը: ՔՀԿ-ները կարևոր դեր են խաղացել Հայաստանի մարզերում ներառական զբաղվածության և եկամտաստեղծ գործունեությունների խթանման մեջ, որից օգտվել և ուժեղացել են բազմաթիվ խոցելի համայնքներ ու քաղաքացիներ: Որոշ ՔՀԿ-ներ շահագրգռված են շարունակելու կամ ընդլայնելու նման մասնակցությունը, մասնավորապես այն ՔՀԿ-ները, որոնք ֆինանսավորում են ստացել «Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ-տեղական ինքնակառավարման մարմիններ» (ՔՀԿ-ՏԻՄ) ծրագրի շրջանակում: ԵՄ-ն ակտիվորեն աջակցել է Հայաստանում Եվրոպական բիզնես ասոցիացիայի ստեղծմանը, ինչպես նաև սոցիալական ձեռնարկությունների զարգացմանը: Հայաստանում այնքան էլ ընկալելի չէ «կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն» հասկացությունը, և ՔՀԿ-ների ու մասնավոր հատվածի շրջանում ցածր է իրազեկության մակարդակը ՄԱԿ-ի բիզնեսի և մարդու իրավունքների սկզբունքների վերաբերյալ:

Մասնավոր հատվածից որոշակի ֆինանսավորում տրամադրվում է սոցիալական և բնապահպանական ծրագրերի համար: ԵՄ-ն **կընդլայնի այդ համագործակցությունը** հետևյալ միջոցներով՝ տեղական զարգացման ծրագրերին ուղղված ներդրումների ավելացում, վաղ մանկական տարիքի երեխաների խնամքի ապահովում, կանանց ուսուցում՝ հասարակության մեջ վերջիններիս դերի ամրապնդման նպատակով, սոցիալական ձեռնարկության մոդելների ընդլայնում, ՔՀԿ-ներին ֆինանսական կառավարման և կայունության ուսուցում, ինչպես նաև զարգացման ներուժ ունեցող, հաջողված փոքր ծրագրերի մասշտաբների ընդլայնում: Քաղաքացիական հասարակության ֆինանսավորումն այս ոլորտում նաև կօժանդակի համայնքների հզորացման ծրագրերին, սոցիալական ձեռնարկությունների զարգացմանը, ինչպես նաև ծայրահեղ աղքատության կրճատմանը:

---

[10] Չորս գերակա ոլորտները նշված են Հայաստանի 2017-2020թթ. Միասնական աջակցության շրջանակի մեջ և կապված են ԵՄ-Հայաստան գործընկերության գերակայությունների, Ռիգայի գագաթնաժողովին համաձայնեցված գերակայությունների՝ «2020թ. 20 առանցքային արդյունքները», ինչպես նաև Հայաստանի զարգացման ոլորտում ԵՄ գործընկերների հետ համատեղ պլանավորման հետ: 2017-2020 թթ.-ի ժամանակաշրջանում աջակցության համար ընտրվել են հետևյալ ոլորտները՝ 1) տնտեսական զարգացում և շուկայական հնարավորություններ, 2) կառույցների հզորացում և կառավարման կարողությունների ամրապնդում, 3) ծառայություններից օգտվելու հնարավորություն, էներգաարդյունավետություն, շրջակա միջավայրի պահպանություն, կլիմայի փոփոխություն, 4) շարժունություն և մարդկային շփումներ:

«Ծառայությունների, էներգաարդյունավետության, շրջակա միջավայրի պահպանության և կլիմայի փոփոխության» ոլորտը Հայաստանում այնքան մեծ ուշադրության չի արժանացել, որքան մյուս երկրներում՝ չնայած մի շարք ՔՀԿ-ների տեխնիկական կարողություններն և գործունեությունը զարգացել են հենց այդ հիմնախնդիրների շուրջ: Հաշվի առնելով Հայաստանի հարուստ, բայց միևնույն ժամանակ խոցելի էկոհամակարգը՝ ԵՄ-ն նախատեսում է ավելացնել ներդրումները հետևյալ բնագավառներում՝ էներգետիկ աղքատության կրճատում, վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործում, շրջակա միջավայրի պահպանություն, կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ուղղված նախաձեռնություններ: Բացի դրանից՝ ԵՄ-ն կշարունակի խորհրդատվություն տրամադրել ՔՀԿ-ներին և կխթանի նշված բնագավառներում քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը: Վերջինիս նպատակն է ապահովել ԵՄ աջակցության արդյունավետությունը, շարունակականությունը և քաղաքացիական հասարակության նախաձեռնողականությունը:

«Շարժունությանը և մարդկային շփումներին» ՔՀԿ-ները նպաստում են հիմնականում մշակույթի և ստեղծագործական արդյունաբերության ոլորտում: ԵՄ-ն կշարունակի խթանել մշակութային ոլորտի ՔՀԿ-ների և այլ կազմակերպությունների հետ սերտ համագործակցությունը՝ որպես ԵՄ-Հայաստան համագործակցության խորացման, ինչպես նաև ներառական տնտեսական աճի միջոց: Վերջինս հիմնականում կիրականացվի ենթադրամաշնորհային մեխանիզմներով, այդ թվում՝ «Ստեղծարար Եվրոպա» ծրագիրը, որն աջակցում է ԵՄ-ում և Եվրոպական հարևանության երկրներում մշակութային բազմազանությանը, ինչպես նաև Էրազմուս+ ծրագիրը, որն աջակցում է բարձրագույն կրթության ոլորտում շարժունության ապահովմանը:

- ԵՄ-Ի ԿՈՂՄԻՑ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ

2014-2017թթ.-ին ԵՄ-ի կողմից քաղաքացիական հասարակության ներգրավումը հիմնականում առաջնորդվում էր նախորդ ճանապարհային քարտեզում սահմանված գերակայություններով: Դրանք են.

- Խթանել քաղաքացիական հասարակության համար նպաստավոր միջավայրի ստեղծումը.
- Խթանել ՔՀԿ-ների կարևոր և կառուցվածքային մասնակցությունը ներքին քաղաքական, ԵՄ ծրագրերի մշակման և միջազգային գործընթացներում.
- Զարգացնել քաղաքացիական հասարակության կարողությունները՝ վերջիններիս դերի արդյունավետ իրականացման նպատակով:

Ստորև նկարագրված են ՔՀ ներգրավման նախորդ ժամանակաշրջանում ԵՄ տեսանկյունից ամենակարևոր ձեռքբերումները:

Նպաստավոր միջավայր

- Համեմատած Մոլդովայի, Վրաստանի և Ուկրաինայի հետ կնքված ԵՄ համաձայնագրերի հետ՝ Հայաստանում ՀԸԳՀ-ն հնարավորություն է տալիս քաղաքացիական հասարակությանն ակտիվորեն ներգրավվելու Համաձայնագրի իրականացման մոնիթորինգի գործընթացում և բարձրացնում է քաղաքացիական հասարակության մասնակցության մակարդակը:
- 2016թ.-ին հասարակական կազմակերպությունների մասին օրենքի ընդունումը կարևոր ձեռքբերում էր, քանի որ այն հնարավորություն տվեց ՔՀԿ-ներին ներգրավվելու եկամտաստեղծ գործունեության և պետության անունից սոցիալական ծառայությունների մատուցման մեջ, ինչպես նաև սկսելու *Actio Popularis* գործեր ՔՀԿ-ների համար (չնայած սահմանափակ թեմաների շուրջ): Օրենքի մշակման ընթացքում ԵՄ-ն աջակցեց քաղաքացիական հասարակության շահերի պաշտպանությանը:
- 2015թ.-ին Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում ԵՄ բյուջետային աջակցության ծրագիրն արտացոլում էր քաղաքացիական հասարակության բարեփոխումների երկարաժամկետ պահանջները: Այդ ծրագրի շրջանակում Հայաստանն առաջին անգամ ընդունեց գենդերային բռնության վերաբերյալ օրենսդրություն՝ չնայած այն չէր արտացոլում կանանց

իրավունքների պաշտպանների լիակատար ձգտումները և ամբողջովին չի համապատասխանում եվրոպական և միջազգային չափորոշիչներին: Խտրականության դեմ պայքարի մասին օրենսդրությունն ավարտուն չէ՝ չնայած կառավարության պատրաստակամությանը և քաղաքացիական հասարակության ու ԵՄ-ի իրավապաշտպանական գործողություններին:

Ներքին քաղաքական, ԵՄ ծրագրերի մշակման և միջազգային գործընթացներում ՔՀԿ-ների մասնակցությունը

- ԵՄ-ն ակտիվորեն աջակցել է օրենսդրության մշակման կարևորագույն փուլերում քաղաքացիական հասարակության մասնակցությանը: Մարդու իրավունքների ոլորտի բյուջետային աջակցության շրջանակում բարելավվել են հինգ թիրախային բնագավառներում միջազգային չափորոշիչների վերաբերյալ ՔՀԿ-ների գիտելիքներն ու փորձը՝ նպաստելով ՔՀԿ ոլորտի ներսում, ինչպես նաև կառավարության և ՔՀԿ-ների միջև իրազեկված և արդյունավետ երկխոսության ծավալմանը:
- Դրական զարգացում է աշխատանքային իրավունքներին առնչվող հիմնախնդիրներում քաղաքացիական հասարակության ակտիվ ներգրավվածությունը: Որպես քաղաքականության լավագույն փորձի օրինակ՝ շատ ՔՀԿ-ներ բարձր են գնահատել «Արտոնությունների ընդհանրացված համակարգի» (GSP+) կապակցությամբ ԵՄ-ի համագործակցությունը, ներառյալ ելակետային պայմանների ուսումնասիրությունը, տեղեկատվության փոխանակումը և քաղաքացիական հասարակության համակարգված օրակարգի խթանումը: ԵՄ-ն նույնպես օգուտներ է քաղել ծրագրի հաջողությունից, քանի որ այն ապահովել է իրազեկված քաղաքական ներգրավվածություն և ստեղծել ՔՀԿ-ների ու փորձագետների միջև լայն երկխոսության հարթակ՝ մարդու իրավունքների պաշտպանության, օրենքի գերակայության, աշխատանքային իրավունքների, կոռուպցիայի դեմ պայքարի, շրջակա միջավայրի պահպանության, մարդկանց և տեսակների թրաֆիքինգի բնագավառներում տեղի ունեցող զարգացումների շուրջ քննարկումներ ծավալելու համար:
- 2017-2020թթ. Միասնական աջակցության շրջանակի հիմքում ընկած համատեղ վերլուծությունը ներառում էր հատուկ քաղաքականության փաստաթուղթ քաղաքացիական հասարակության ոլորտի և ԵՄ-քաղաքացիական հասարակության ընդհանուր գերակայությունների վերաբերյալ: ՔՀԿ-ներին նաև խորհրդատվություն է տրամադրվել բոլոր մյուս ոլորտների քաղաքականության փաստաթղթերի վերաբերյալ:
- ԵՄ-ն օժանդակել է Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմի աշխատանքներին՝ երկու հաջորդական դրամաշնորհների տրամադրման միջոցով:
- 2016թ.-ին ԵՄ պատվիրակությունն սկսեց կարողությունների զարգացմանն ուղղված խոշոր ծրագիր, որի նպատակը ՔՀԿ-ների կոալիցիաների հզորացումն ու քաղաքական երկխոսության մեջ նրանց դերի ամրապնդումն էր: Ինը ենթադրամաշնորհ է տրամադրվել ՔՀԿ-ների կոալիցիաներին, որոնք աշխատում են Արևելյան գործընկերության Ռիգայի գերակայությունների ուղղությամբ:
- Անդրադառնալով ԵՄ-ի տարեկան միջոցառումների ծրագրերում Հայաստանի քաղաքացիական հասարակության մասնակցության սահմանափակումներին՝ 2017թ.-ին մեկնարկեց ծրագիր, որը խթանում էր ՔՀԿ-ների արդյունավետ խորհրդատվությունը:
- 2017թ.-ի վերջում ԵՄ պատվիրակությունը ստորագրեց պայմանագիր, որի նպատակն էր օժանդակել ՀԸԳՀ-ով նախատեսված երկկողմ Քաղաքացիական հասարակության պլատֆորմի ստեղծման վերաբերյալ տեղեկատվության փոխանակմանը և քաղաքացիական հասարակության հետ քննարկումներին:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունները

- 2014-2017թթ.-ին մեկնարկեցին ԵՄ երեք խոշոր ծրագրեր, որոնք ուղղված էին քաղաքացիական հասարակության կարողությունների զարգացմանը, ինչպես նաև առնվազն երեք փոքր ծրագրեր՝ կոնկրետ ոլորտային ուղղվածությամբ:

- 2015թ.-ի դրությամբ՝ ԵՄ ծրագրերից շատերում պարտադիր դարձավ երրորդ կողմերին ենթադրամաշնորհների տրամադրման բաղադրիչը, որը հնարավորություն տվեց ներգրավելու և ֆինանսավորելու Հայաստանի մարզերի ավելի մեծ թվով ՔԿՀ-ների և նախաձեռնող խմբերի: 2016-2017թթ.-ին նման մեխանիզմներով դրամաշնորհներ ստացան Հայաստանի 37 ՔՀԿ-ներ և ՔՀԿ-ների կողմից ղեկավարվող 10 սոցիալական ձեռնարկություններ: Այս միտումը շարունակվել է 2018թ.-ին:

ԵՄ-ն Հայաստանի քաղաքացիական հասարակության ամենախոշոր դոնորն է: Ֆինանսավորումը տրամադրվում է տարբեր բնագավառներում իրականացվող տարածաշրջանային և ազգային ծրագրերի միջոցով, այդ թվում՝ «Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ-տեղական ինքակառավարման մարմիններ» (ՔՀԿ-ՏԻՄ) ծրագիրը, Ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական գործիքը (EIDHR), ինչպես նաև այլ թիրախային ծրագրեր: 2018թ.-ի դրությամբ՝ ՔՀԿ-ների համար Հայաստանում գործում էր Արագ արձագանքման մեխանիզմը: 2014-2016թթ.-ին Հայաստանում ՔՀԿ ծրագրերի համար տրամադրվել է ընդամենը **14,500,000 եվրո: Նշված ֆինանսավորումը բաշխվել է սոցիալական ձեռնարկությունների զարգացման, կոռուպցիայի դեմ պայքարի, մարդու իրավունքների պաշտպանության, գյուղատնտեսության և էներգաարդյունավետության ոլորտներում իրականացվող ավելի քանի 34 ծրագրերի միջև:**

Աղյուսակ 1. 2014-2017թթ.-ին ՔՀԿ-ներին ուղղված ԵՄ ֆինանսավորումը (փաստացի)

Ֆինանսա-վորման պարտավո-րությունը ստանձնելու տարին	Ֆիանսավոր-ման գործիքը	Ֆինանսա-վորման չափը (€)	Կարգավիճակ	Նկարագրություն
2011թ.	**Եվրոպական հարևանութ-յան գործիք**	**1,500,000**	Ծրագրերը գտնվում են իրականաց-ման փուլում, որոնցից մի քանիսը՝ ավարտական փուլում:	Իրականացվել են ՔՀԿ-ներին ուղղված հայտահրավերի միջոցով: Կարողությունների զարգացմանն ուղղված մեկ ծրագիր՝ «Ավելի հզոր ՔՀԿ-ներ, ավելի հզոր Հայաստան» ծրագիրը Սոցիալական ձեռնարկություններին ուղղված երեք ծրագրեր 1) հաշմանդամություն ունեցող երիտասարդների մասնագիտական կրթություն և աշխատունակության ապահովում 2) կենսազանգվածով ջեռուցման լուծումներ. Հայաստանի համայնքներում սոցիալական ձեռնարկությունների կողմից կենսազանգվածի էներգիայի օգտագործման խթանում 3) համայնքային զարգացում՝ սոցիալական ձեռներեցության միջոցով (այդ թվում՝ սոցիալական ձեռնարկությունների ընկերակցության ստեղծմանն ուղղված աջակցությունը)

2013թ.	**Եվրոպական հարևանութ-յան գործիք**	**250,000**	Ընթացիկ ծրագիր	Իրականացվում է շրջանակային համաձայնագրի ներքո: Այն ներառում է ՔՀԿ-ների կողմից ՀԸԳՀ-ի իրականացման մոնիթորինգի և առնչվող ՔՀԿ նախաձեռնությունների աջակցության, ինչպես նաև համագործակցության ռազմավարական այլ ոլորտների շուրջ քաղաքացիական հասարակության հետ երկխոսություններ:
2014թ.	**ՔՀԿ-ՏԻՄ**	**2,600,000**	Ընթացիկ ծրագրեր	Իրականացվում են ՔՀԿ-ներին ուղղված հայտահրավերների միջոցով: Օժանդակում են հանրային հաշվետվողականության բնագավառի ծրագրերին:
2014թ.	**Ժողովրդա-վարության և մարդու իրավունք-ների եվրոպական գործիք**	**850,000**	Ընթացիկ ծրագրեր	Իրականացվում են ՔՀԿ-ներին ուղղված հայտահրավերների միջոցով: Օժանդակում են քաղաքացիական հասարակության գործողությունների միջոցով մարդու իրավունքների պաշտպանությանը:
2015թ.	**Ժողովրդա-վարության և մարդու իրավունք-ների եվրոպական գործիք**	**900,000**	Ընթացիկ ծրագրեր	Իրականացվում են ՔՀԿ-ներին ուղղված հայտահրավերների միջոցով: Օժանդակում են քաղաքացիական հասարակության գործողությունների միջոցով մարդու իրավունքների պաշտպանությանը:
2016թ.	**ՔՀԿ-ՏԻՄ**	**1,400,000**	Ընթացիկ ծրագրեր	Իրականացվում են ՔՀԿ-ներին ուղղված հայտահրավերների միջոցով: Օժանդակում են տնտեսության աճին և տուրիզմի զարգացմանը:
2016թ.	**Ժողովրդա-վարության և մարդու իրավունք-ների եվրոպական գործիք**	**900,000**	3 ընթացիկ ծրագրեր	Իրականացվում են ՔՀԿ-ներին ուղղված հայտահրավերների միջոցով: Օժանդակում են քաղաքացիական հասարակության գործողությունների միջոցով մարդու իրավունքների պաշտպանությանը:
2017թ.	**Ժողովրդա-վարության և մարդու իրավունք-ների եվրոպական գործիք**	**900,000**	Ընթացիկ ծրագրեր	ՔՀԿ-ներին ուղղակիորեն պայմանագրերի շնորհում՝ ընտրական գործընթացների վերահսկման և շահերի պաշտպանության համար: Մեկ փոքր դրամաշնորհ հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների պաշտպանության համար:

2015թ.	**Եվրոպական հարևանութ-յան գործիք**	**5,000,000**	Ընթացիկ ծրագրեր	Իրականացվում են ՔՀԿ-ներին ուղղված հայտահրավերների միջոցով:: ՔՀԿ-ների կարողությունների զարգացմանն ուղղված երկու ծրագիր, որոնք նպատակաուղղված են քաղաքական երկխոսության մեջ ՔՀԿ-ների ներգրավման և սփյուռքի հետ համագործակցության միջոցով ՔՀԿ ոլորտի մասնագիտացմանը: Երկու ծրագրերն էլ ներառում են ուսուցում, վերապատրաստում և ենթադրամաշնորհների տրամադրում մարզային ՔՀԿ-ներին, ՔՀԿ կոալիցիաներին և հայկական հասարակական շարժումներին:

Աղյուսակ 2. 2017-2020 թթ.-ին ԵՄ-ի երկկողմ և ոլորտային ֆինանսավորումը (հնարավոր)

Գործիք	**Եվրոպական հարևանության գործիք/ Երկկողմ միասնական աջակցության շրջանակ 2017-2020թթ.**	**ՔՀԿ-ՏԻՄ 2019թ.**	**Ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական գործիք 2018-2020թթ.**
	7,200,000 – 8,800,000 Եվրո	**3,000,000 Եվրո**	**3,000,000 եվրո**

Սկսած 2013 թվականից՝ հանդիպումներ են տեղի ունեցել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ՝ ԵՄ պատվիրակության ղեկավարի/քաղաքական և համագործակցության բաժինների ղեկավարների մակարդակով: Հանդիպումների ընթացքում հիմնականում արծարծվել են հետևյալ թեմաները՝ ԵՄ քաղաքականությունը, ոլորտային աջակցությունը և համագործակցության գերակայությունները: Հանդիպումների նպատակն էր ներգրավել ՔՀԿ-ներին ծրագրային մշակման տարբեր փուլերում: Նման հանդիպումները շարունակական բնույթ են կրում, և ՔՀԿ-ների ներգրավման հաջորդ ճանապարհային քարտեզի ներքո նախատեսված է քաղաքացիական հասարակության դերակատարների լայն շրջանակի ներգրավում:

ԵՄ-ն, անդամ պետությունների հետ միասին, նաև իրականացրել է գերակայությունների և Հայաստանի 23 տարբեր ոլորտների կարևորագույն մարտահրավերների համատեղ վերլուծություն: Համատեղ վերլուծության փաստաթղթի մեջ քաղաքացիական հասարակությունը գտնվում է փոխկապակցված գերակայությունների շարքում, որի նպատակն է ամրապնդել քաղաքացիական հասարակության կարողություններն ու դերը քաղաքական երկխոսության, շահերի պաշտպանության, տեղական և ազգային մակարդակներում կիրարկման և մոնիթորինգի գործընթացներում, ինչպես նաև նպաստել մասնավոր ոլորտի զարգացմանը, սոցիալական նորարարությանը և տնտեսական աճին:

- ԵՄ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՔՀԿ-ՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ

Հայաստանում ներկայացչություն ունեցող ԵՄ անդամ պետությունների մեծ մասը չունեն բյուջեով հատկացված միջոցներ ՔՀԿ-ների աջակցության համար: Այս տարածքում ԵՄ անդամ պետություններից ներկայում ակտիվ են Չեխիան, Գերմանիան, Ֆրանսիան, Նիդեռլանդները, Շվեդիան, Միացյալ Թագավորությունը (ցանկը սպառիչ չէ):

Երկկողմ ֆինանսական հատկացումները հիմնականում ապահովվում են **ՄԹ**-ի կողմից՝«Լավ կառավարման հիմնադրամի» միջոցով (Հայաստանում առկա է 2018թ.-ից), որն ուղղված է ժողովրդավարական կառավարման և տնտեսական բարեփոխումների, մարդու իրավունքների և աշխատանքային միգրացիայի, կորպորատիվ սոցիալական պատասխանատվության և շրջակա միջավայրի պահպանության ծրագրերի խթանմանը: Հեղափոխությունից հետո Մեծ Բրիտանիայի դեսպանությունն ավելի մեծ ջանքեր է գործադրում ապատեղեկատվությանը հակազդելու, մամուլի պրոֆեսիոնալիզմը բարձրացնելու, անկախ զանգվածային լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության ոլորտի ֆինանսական կայունությունը բարելավելու ուղղությամբ:

Նիդեռլանդների դեսպանությունը (Վրաստանում, որը նաև ներկայացնում է Հայաստանը) իր աջակցությունն ուղղում է քաղաքացիական հասարակության այն նախաձեռնություններին, որոնք հիմնականում կենտրոնացած են մարդու իրավունքների (հավասարություն, խտրականության դեմ պայքար, կրոնի և հավատի ազատություն, կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներ, ԼԳԲՏԻ անձանց համար հավասար իրավունքներ և արտահայտվելու ազատություն), ժողովրդավարացման գործընթացների, օրենքի գերակայության ապահովման և ՀԸԳՀ-ի իրականացման վրա: Դեսպանատան աջակցությունը նաև ուղղված է լոբբինգի և շահերի պաշտպանության բնագավառներում քաղաքացիական հասարակության լայն զանգվածների կարողությունների զարգացմանը:

Չեխիայի դեսպանատան աջակցությունն ուղղորդվում է Չեխիայի Հանրապետության «Մարդու իրավունքների և անցումային շրջանի խթանման քաղաքական հայեցակարգով» և իրականացվում տեղական ՔՀԿ-ներին մրցունակ, փոքր դրամաշնորհների տրամադրմամբ: Աջակցության գերակա ուղղություններն են՝ մարդու իրավունքների պաշտպանություն, տեղեկատվության և խոսքի ազատություն, քաղաքացիական մասնակցություն, հավասարություն և խտրականության բացառում, ժողովրդավարական կառույցների ամրապնդում: Դեսպանատան աջակցությունը հիմնականում նախատեսված է շրջաններում գործող կազմակերպությունների ու ակտիվիստների համար:

Գերմանիան ընդլայնել է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցությունը «Արևելյան գործընկերության երկրներում և Ռուսաստանում քաղաքացիական հասարակության հետ համագործակցության ընդլայնում» ծրագրով, որը մեկնարկեց 2014թ.-ին Գերմանիայի Բունդեսթագի կողմից: Ծրագիրը խթանում է վերափոխման և ինտեգրման գործընթացներին՝ Գերմանիայի և տարածաշրջանի քաղաքական հասարակությունների միջև համագործակցության միջոցով: Վերջինս ընդգրկում է մի շարք մշակութային և հանրակրթական ծրագրերի իրականացում՝հիմնականում շեշտը դնելով լրատվամիջոցների, գիտական համայնքի, կրթության, այդ թվում՝ մասնագիտական կրթության, մշակույթի, լեզվի և երիտասարդների հետ աշխատանքի վրա: 2014թ.-ից ֆինանսավորվել են ավելի քան 900 ՔՀԿ ծրագրեր: Այս ճանապարհային քարտեզի մշակման ընթացքում հնարավոր չեղավ ճշգրտել Հայաստանի մասնակցությամբ բազմակողմ և երկկողմ ծրագրերի քանակը:

Շվեդիան աջակցում է քաղաքացիական հասարակությանը՝ հիմնականում առաջնորդվելով Արևելյան Եվրոպայի, Արևմտյան Բալկանների և Թուրքիայի հետ բարեփոխումային համագործակցության 2014-2020թթ.-ի ռազմավարությամբ: Աջակցության նպատակն է՝ Հայաստանի քաղաքացիական հասարակությանը դարձնել ուժեղ և բազմակարծ՝ ստեղծելով ժողովրդավարական, թափանցիկ, ճկուն կազմակերպություններ, և հմտորեն ներգրավել քաղաքական երկխոսության և ծառայությունների մատուցման մեջ (ազգային ու տեղական մակարդակներում):

Ֆրանսիայի դեսպանության գերակայություններից է խթանել Երևանի և մարզային ՔՀԿ-ների միջև երկխոսությունն ու համագործակցությունը՝ նոր քաղաքական միջավայրում ՔՀԿ-ների դերի ամրապնդման նպատակով, ինչպես նաև կառավարության, քաղաքացիական հասարակության, ԵՄ պատվիրակության և ԵՄ անդամ պետությունների միջև երկխոսությունն ու համագործակցությունը՝ ՀԸԳՀ-ի մոնիթորինգի արդյունավետ իրականացման նպատակով: Դեսպանատան աջակցությունն ուղղված է խտրականության դեմ պայքարին, տղամարդկանց և կանանց միջև հավասարությանը,

խոցելի խմբերի պաշտպանությանը, ինչպես նաև այնպիսի ոլորտներին (օր.՝ շրջակա միջավայրի պահպանություն, էներգաարդյունավետություն), որտեղ ՔՀԿ-ների ներգրավվածությունն արտահայտված և տեսանելի չէ: Նշված գերակայություններն իրականացվում են տեղական ՔՀԿ-ներին տրամադրվող փոքր դրամաշնորհների և ոչ ֆինանսական աջակցության միջոցով (երկխոսություն, տեղեկատվության փոխանակում):

- ՄԻՆՉԵՎ ՕՐՍ ԵՄ-ՔՀԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ՔԱՂՎԱԾ ԴԱՍԵՐԸ

ՔՀԿ-ների ներգրավման նախորդ ժամանակաշրջանում քաղված դասերը հիմնականում համապատասխանում են 2014-2017թթ. ճանապարհային քարտեզում նշվածին:

Նախորդ ճանապարհային քարտեզի մշակման ընթացքում սահմանափակ թվով խորհրդատվությունները վկայում էին այն մասին, որ փաստաթուղթը մեծ հետաքրքրություն չի վայելում ՔՀԿ-ների շրջանում: Միայն 2017թ.-ի կեսերին և դրանից հետո կանոնավոր, կառուցվածքային երկխոսություն և համագործակցություն զարգացավ ԵՄ պատվիրակության և անդամ պետությունների, ինչպես նաև Հայաստանում քաղաքացիական հասարակության այլ դոնորների միջև: Վերջինս հանգեցրեց դոնորների աջակցության որոշակի համընկնման: Դոնորների միջև համագործակցությունն արդեն ավելի կանոնավոր է, սակայն առաջարկվում է ամրապնդել այն և խթանել միասնական գործողությունների իրականացումը՝ ստեղծելով ճանապարհային քարտեզի համակարգման հատուկ խումբ՝ կազմված ԵՄ անդամ պետությունների դեսպանություններից և քաղաքացիական հասարակությունից: Խումբը կվերահսկի ընթացիկ ճանապարհային քարտեզի իրականացումը և կապահովի հետևողականությունը:

ԵՄ-ի չափազանց զգուշավորությունը դրամաշնորհների ռիսկայնության հարցում խոչընդոտում է նորարարությանը և հաճախ չի թողնում բացահայտել փոփոխության հստակ օրակարգ ունեցող, հատկապես Երևանից դուրս գտնվող կազմակերպություններին: ԵՄ պատվիրակությունը կձգտի օժանդակել տեղական ՔՀԿ-ներին, որպեսզի վերջիններս կարողանան առաջ մղել իրենց օրակարգը և անմիջականորեն արձագանքել համայնքի պահանջներին: Այս խնդիրը մասամբ լուծվել է ՔՀԿ-ների կարողությունների զարգացման խոշոր ծրագրերում ենթադրամաշնորհային մեխանիզմի ներդրմամբ, որը կպահպանվի 2019-2020թթ.-ի ժամանակաշրջանում:

ԵՄ ճանապարհային քարտեզի վերաբերյալ առաջարկությունները կարտացոլվեն ՔՀԿ-ներին ուղղված հայտահրավերների մեջ, որոնք կմեկնարկեն 2019-2020թթ.-ին:

- ՀՂՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ՝ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՄ-ՔՀ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՄ-Հայաստան համագործակցության շրջանակը

- **ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր**
  https://eeas.europa.eu/headquarters/headquarters-homepage/37967/eu-armenia-comprehensive-and-enhanced-partnership-agreement-cepa_en

- **Եվրոպական միության և Հայաստանի միջև գործընկերության գերակայությունները**
  https://eeas.europa.eu/headquarters/headquarters-homepage/40175/partnership-priorities-between-european-union-and-armenia_en

- **2017-2020թթ. Միասնական աջակցության շրջանակ**
  https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/sites/near/files/armenia_ssf_2017-2020_final.pdf

- **Արևելյան գործընկերություն. «2020թ. 20 առանցքային արդյունքները»**

https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/sites/near/files/eap_20_deliverables_for_2020.pdf

ՔՀԿ ոլորտի գնահատումներ՝ իրականացված 2015-2018թթ.-ին ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակում

- Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների զարգացման կարիքների գնահատում՝ «Ավելի հզոր քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, ավելի հզոր Հայաստան» ծրագիր (2018թ. հոկտեմբեր)
http://www.civilsociety.am/resources/strongsco//pubs/d0459dcd0777af3c7d8fff58c9948c2e.pdf

- Հայաստանի ՔՀԿ-ների մասնագիտական կարիքների գնահատում՝ «ՔՀԿ կամուրջ» ծրագիր (2017թ. հունիս)
http://www.civilsociety.am/resources/strongsco//pubs/2736ae1e2778319cf1712c0995e62295.pdf

- Հայաստանում քաղաքական երկխոսության մեջ քաղաքացիական հասարակության ներգրավում՝ «Քաղաքացիական հասարակության երկխոսություն՝ հանուն առաջընթացի» ծրագիր (2015թ.)
http://www.civilsociety.am/resources/strongsco//pubs/7e824bff6af09cdc3d1626e4068de25d.pdf

Այլ աղբյուրներ.

- Կենտրոնական Եվրոպայի և Եվրասիայի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների 2017թ. կայունության ցուցիչ (2018թ. սեպտեմբեր)
https://www.fhi360.org/sites/default/files/media/documents/resource-civil-society-organization-2017-regional-report.PDF

- Հայաստանի նոր հանգամանքներում քաղաքացիական հասարակության ռազմավարությունները՝ Եվրասիա համագործակցության հիմնադրամի «Քաղաքացիական հասարակության ռազմավարության մշակում» միջոցառումից արված եզրակացությունները (2018թ. սեպտեմբեր)
http://epfarmenia.am/document/Civil-Society-Strategizing-Event-Final-Report

- Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարի «Հայաստանում մարդու իրավունքների իրավիճակը» զեկույցը (2019թ. հունվար)
https://rm.coe.int/report-on-the-visit-to-armenia-from-16-to-20-september-2018-by-dunja-m/168091f9d5

- 2019թ. համաշխարհային զեկույց՝ Մարդու իրավունքների դիտորդական զեկույց. Հայաստան
https://www.hrw.org/world-report/2019/country-chapters/armenia#1aadcc

- «Ազգերն անցումային շրջանում (2018թ.)»՝ Freedom House-ի Հայաստանի մասին զեկույցը
https://freedomhouse.org/report/nations-transit/2018/armenia

- Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ (հայաստանյան ինտերնետային էջ)
https://www.ohchr.org/en/countries/enacaregion/pages/amindex.aspx

- Հայաստանին ուղղված Համընդհանուր պարբերական դիտարկման (ՀՊԴ) առաջարկությունները
https://www.upr-info.org/en/review/Armenia

- **Նպաստավոր միջավայրի ազգային գնահատում (ՆՄԱԳ). Հայաստանի վերաբերյալ ազգային զեկույց (2018թ.)**
  http://ngoc.am/wp-content/uploads/2018/11/EENA-Report-Armenia_ENG.pdf

ՄԱՍ II. ՔՀԿ-ՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԵՄ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՍԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՔՀ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԵՄ ԹԻՐԱԽՆԵՐԸ	ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ/ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ (վերլուծություն, քաղաքական երկխոսություն, ֆինանսական կամ ոչ ֆինանսական աջակցություն)	ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆՈՐՈՇ ՄԻՋՈՑՆԵՐ (ծրագրեր, գործիքներ և այլն)
ՆՊԱՍՏԱՎՈՐ ՄԻՋԱՎԱՅՐ ՔՀԿ-ՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ			
Գերակայություն 1. Օժանդակել մարգինալացված, խոցելի խմբերի շահերը ներկայացնող և (կամ) ամենախոցելի, ռիսկային մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՔՀԿ-ների գործունեության միջավայրի բարելավմանը			
- Գործունեության միջավայրը հավասարապես ազատ, բաց և անվտանգ չէ բոլոր ՔՀԿ-ների համար: Մարգինալացված և խոցելի խմբերի շահերը ներկայացնող ՔՀԿ-ները հաճախ դառնում են ոտնձգության և ատելության խոսքի առարկա: + Նոր կառավարությունը հայտարարել է, որ պատրաստ է օժանդակել ամենախոցելի և մարգինալացված խմբերին ուղղված	**1.1. Ամենախոցելի և մարգինալացված խմբերի, ներառյալ անապահով գյուղական բնակավայրերի կանանց և երիտասարդների, ազգային և սեռական փոքրամասնությունների, հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց կազմակերպությունների (ՀՄԿ) գործունեության պայմանների բարելավում:** **1.2. Աջակցություն ՔՀԿ-ների ցանցերին և կոալիցիաներին՝ շեշտը դնելով մարգինալացված կամ անապահով խմբերի շահերը ներկայացնող ՔՀԿ կոալիցիաների վրա: ԵՄ-ի և հայաստանյան ՔՀԿ-ների միջև սերտ**	• Քաղաքական երկխոսություններ • Հանրային և հանդարտ դիվանագիտություն • Ֆինանսական աջակցություն մարգինալացված և խոցելի խմբերի շահերը ներկայացնող ՔՀԿ-ներին և ՔՀԿ կոալիցիաներին • Տեխնիկական աջակցությամբ խթանվող և Հայտահրավերի մեջ որպես պահանջ ընդգրկված «իրավունքների վրա հիմնված մոտեցման» ընդունում և կիրառում	• Մարդու իրավունքների և արդարադատության հարցերի շուրջ ԵՄ-Հայաստան երկխոսությունների մեջ ՔՀԿ ներգրավմանն օժանդակելու միջոցով (ԵՄ պատվիրակության անձնակազմ, ՔՀԿ-ներ, պետական կառավարման ոլորտի գործընկերներ) • Քաղաքական հայտարարություններ՝ ըստ անհրաժեշտության (ԵՄ պատվիրակություն և ԵՄ անդամ պետությունների դեսպանություններ) • Ֆինանսական աջակցություն հետևյալ գործիքներով. **Ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական գործիք**

բարեփոխումներին:	**համագործակցության ձևավորում:** **1.3. ՔՀԿ-ները գիտելիքներ են ձեռք բերում «իրավունքների վրա հիմնված մոտեցման» վերաբերյալ և ընդգրկում են այն իրենց ռազմավարության, ծրագրերի և ամենօրյա աշխատանքի մեջ:** **1.4. Լրատվամիջոցներում մեծացել է տեղեկատվական հոսքը Հայաստանում ամենախոցելի մարդու իրավունքների վերաբերյալ, և ամրապնդվել է քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների միջև կապն ու համագործակցությունը:** **1.5. ՔՀԿ-ները կարևոր դերակատարություն ունեն զանգվածային լրատվամիջոցների և երիտասարդների, մեծահասակների, ավագ սերնդի շրջանում տեղեկատվական գրագիտության խթանման գործում:**		- Ընթացիկ ծրագրեր, որոնք աջակցում են փակ հաստատություններում հաշմանդամություն ունեցող անձանց և մարդու իրավունքների պաշտպանության գործողություններին: - Ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական գործիքով 2018-2020թթ.-ի համար հատկացված ֆինանսական միջոցները (2.7 միլիոն եվրո) կօգտագործվեն մարդու ամենախոցելի իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՔՀԿ-ների գործունեության ընդլայնման նպատակով: **<u>Եվրոպական հարևանության գործիք (ԵՀԳ)/ Հայաստանում «ԵՄ քաղաքացիական հասարակության աջակցություն. ժողովրդավարության ամրապնդում» լրատվական գործիքի 2018թ.-ի տարեկան միջոցառումների ծրագիրը (ՏՄԾ)</u>** - Ծրագրի շրջանակում՝ բաց Հայտահրավերի միջոցով, 2 միլիոն եվրո կտրամադրվի անկախ լրատվամիջոցներին և այդ բնագավառում աշխատող ՔՀԿ-ներին: **<u>«Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ – տեղական ինքնակառավարման մարմիններ» (ՔՀԿ-ՏԻՄ) ծրագիր, 2019թ.</u>** - Հատկացված գումարների մի մասը նախատեսված է ուղղել այն ՔՀԿ-ների խթանմանը, որոնք աշխատում են

			ծայրահեղ աղքատության հաղթահարման, ամենախոցելի և անապահով համայնքների վիճակի բարելավման ուղղությամբ: Այդ նպատակով 2019թ.-ին կթողարկվի Հայտահրավեր: **<u>Եվրոպական հարևանության գործիք (ԵՀԳ)/ 2019թ. –ի տարեկան միջոցառումների ծրագիր (ՏՄԾ)</u>**<u>, որտեղ առաջարկվում է մեկնարկել</u> **«Տեղական մակարդակում զարգացման ոլորտի դերակատարների հզորացում»** ծրագիրը:
<u>Գերակայություն 2. Օժանդակել Հայաստանի քաղաքացիական հասարակությանը կանոնավոր մոնիթորինգի իրականացման և ՔՀ նպաստավոր միջավայրի իրավական դաշտի շուրջ քաղաքական երկխոսության մեջ ներգրավման գործում</u>			
- ՔՀ նպաստավոր միջավայրի վերաբերյալ իրավական դաշտը սահմանված է, սակայն կարիք կա կանոնավոր մոնիթորինգի իրականացման և բարելավման՝ ելնելով ժողովրդավարության անկումը կանխելու նկատառումներից: - ՔՀԿ-ներն իրազեկված չեն իրենց գործունեությունը կարգավորող իրավական դրույթների, ինչպես նաև մարդու հիմնարար	**2.1. ՔՀԿ-ների կարողությունների զարգացում՝ վերահսկելու ՔՀ նպաստավոր միջավայրը և մեկնաբանելու նոր օրենսդրությունը՝ միջազգային և եվրոպական չափորոշիչներին համապատասխան:** **2.2. ՔՀԿ-ներն իրազեկված են այլ երկրներում սոցիալական ձեռնարկությունների գործունեության պայմանների մասին և իրենց դիրքորոշումն են հայտնում Հայաստանում ՔՀ նպաստավոր միջավայրի ձևավորման վերաբերյալ:** **2.3. Ավագ դպրոցի և ԲՈՒՀ-երի ուսանողներին հասանելի է**	• Աջակցություն Հայաստանի ՔՀԿ-ների նպաստավոր միջավայրի Մոնիթորինգի մատրիցայի իրականացմանը • Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) և սոցիալական ձեռներեցության գործիքների (օր.՝ Եռակի մնացորդ, Սոցիալական չափման գործիք, սոցիալական ձեռնարկությունների ֆինանսավորման նոր մոտեցումներ) ներկայացում	• ԵՄ պատվիրակության անձնակազմ, ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Առաջընթացի վերահսկում, գործողության հզորացում» տարածաշրջանային (օր.՝ Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության գործիքը) և ազգային աջակցության միջոցառումներ • Հատուկ ֆինանսական աջակցություն ՔՀԿ ծրագրերին • ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ՔՀԿ ծրագրեր և տեխնիկական աջակցություն

իրավունքների և քաղաքացիական հասարակության ներգրավվածության վերաբերյալ միջազգային և եվրոպական չափորոշիչների մասին: - ՔՀԿ-ների սահմանափակ իրազեկվածությունը սոցիալական ձեռնարկությունների ոլորտը կարգավորող իրավական դաշտի մասին: - Դպրոցներում, քոլեջներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում հանրային և քաղաքացիական կրթության բացակայություն կամ ոչ բավարար առկայություն:	**քաղաքացիական իրավունքի և ՔՀ միջավայրի մասին տեղեկատվությունը, և նրանք իրենց ուսումնական հաստատություններում օգտվում են քաղաքացիական կրթության հնարավորություններից:**	և Հայաստանի պայմաններին համապատասխանեցում: ՄԱԿ-ի բիզնեսի և մարդու իրավունքների առաջնորդող սկզբունքների մասին իրազեկության մակարդակի բարձրացում: • Արտադասարանական կարգով ուսանողների և երիտասարդության իրազեկության մակարդակի բարձրացում քաղաքացիական հասարակության հնարավորությունների, ակտիվիզմի, «իրավունքների վրա հիմնված մոտեցումների» և փաստական քաղաքականությունների մշակման վերաբերյալ: • Տեխնիկական աջակցություն, որն ուղղված է կամավորության խթանման համապարփակ մեխանիզմների մշակմանը:	

ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ,ԵՄ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՄԵՋ ՔՀԿ-ՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ			
Գերակայություն 3. Օժանդակել քաղաքացիական հասարակությանը հանդես գալու որպես կառավարության արդյունավետ դիտորդ և կառուցողական ներդրում ապահովելու կառավարման բարեփոխումների գործընթացում			
- ՔՀԿ-ների, նրանց համախոհների և որոշում կայացնողների միջև կարևոր և համակարգված համագործակցության բացակայություն՝ հատկապես տեղական մակարդակում և խորհրդարանում: - Փաստական քաղաքականությունների մշակման և մոնիթորինգի մասնագիտական, վերլուծական կարողությունների և փորձի բացակայություն: - ՔՀԿ-ների փորձի և կառավարման որոշակի ոլորտներում ներգրավվածության միջև անհամապատասխանություն - Կոալիցիաների կազմման	**3.1. ՔՀԿ-ների դերը՝ որպես կառավարության և խորհրդարանի գործունեության դիտորդ, տեսանելի և ճանաչելի է՝ ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական մակարդակներում:** **3.2. ՔՀԿ-ները կարողանում են համագործակցել (մշտադիտարկում, քաղաքական երկխոսություն և վերահսկողություն) իշխանությունների հետ տարբեր մակարդակներում, այդ թվում՝ խորհրդարանի և կառավարության հետ (նախարարություններ և առընթեր կառույցներ):** **3.3. ՔՀԿ-ների համախոհներն ընդունում են ՔՀԿ-ներին որպես ակտիվ դերակատարների, որոնք աջակցում են իրենց համախոհների առաջարկած ինստիտուցիոնալ լուծումներին և ստեղծում տարբեր հարթակներ նրանց մասնակցության համար:**	• Քաղաքական երկխոսություն, խորհրդատվություն և օժանդակություն • Կարողությունների զարգացում՝ քաղաքական երկխոսության հմտությունների, իրավապաշտպանության, փաստական հետազոտությունների իրականացման, պետական քաղաքականության մոնիթորինգի և գնահատման առումով: • Ֆինանսական աջակցություն ՔՀԿ-ների և կառավարության կողմից համաձայնեցված կառուցվածքային երկխոսության մեխանիզմներին • ԵՄ բյուջետային աջակցության և այլ եռանկյունային քաղաքական քննարկումներ	• Հայաստանի ՔՀԿ-ների կարողությունների զարգացման ԵՄ ընթացիկ ծրագրերը • Հայաստանի քաղաքացիական հասարակության հետ առնչվող բոլոր երկկողմ և ոլորտային ԵՄ ծրագրերը (ԵՀԳ, Ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական գործիք) • ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող միջազգային և տարածաշրջանային ծրագրեր, որոնք թիրախավորված են քաղաքացիական հասարակությանը (Ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական գործիք, ՔՀԿ-ՏԻՄ ծրագիր, Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության գործիք, Ժողովրդավարության եվրոպական հիմնադրամ (EED)): • Ներգրավելով ՔՀԿ-ներին

փորձի բացակայություն, որն անհրաժեշտ է քաղաքականության մեջ ազդեցիկ դերակատարության համար: - Թեև Ազգային ժողովը և կառավարությունը հայտարարում են, որ պատրաստակամ են ներգրավելու քաղաքացիական հասարակությանը արդարադատության ոլորտի բարեփոխումների վերահսկման գործընթացում, դատական համակարգը և ՀՀ փաստաբանների պալատը դեռ փակ են ՔՀԿ-ների կողմից վերահսկման համար: + Քաղաքական փոփոխություններից հետո ՔՀԿ-ները նշում են, որ վերաբերմունքն ավելի դրական է՝ տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների իրավունքների և	**3.4. ՔՀԿ-ների վերլուծական կարողությունների զարգացում՝ քաղաքականությունների արդյունավետ մոնիթորինգի իրականացման և դրանց վերաբերյալ կարծիքների արտահայտման նպատակով:** **3.5. Իրավապաշտպանության և քաղաքական ներգրավման նպատակով ՔՀԿ-ների կոալիցիաների կազմման և պահպանման կարողությունների ամրապնդում** **3.6. ՔՀԿ-ներն իրազեկված են էլեկտրոնային կառավարման գործիքների մասին և ակտիվորեն ու նպատակայնորեն կիրառում են դրանք տարբեր քաղաքականությունների վերաբերյալ կարծիքներ արտահայտելիս:** **3.7. ՔՀԿ-ներն ավելի լավ են գիտակցում իրենց դերը դատական համակարգում տեղի ունեցող գործընթացների մոնիթորինգի մեջ և նպաստում են ՀՀ փաստաբանների պալատի կառավարման մարմինների միջև մրցակցության և փոխադարձ զսպվածության ապահովմանը:**	• ԵՄ-ի կողմից ակտիվ համագործակցություն և աջակցություն Հայաստանի տարբեր շրջանների ՔՀԿ կոալիցիաներին և ՔՀԿ-ների միջև փորձի ու գիտելիքների փոխանակման հնարավորություններին • Գործընկերության և կոալիցիաների կազմման պարտավորություն/ առաջարկություն Հայտահրավերի մեջ • Միջազգային լավագույն փորձի և էլեկտրոնային կառավարման միտումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում, Հայաստանում առկա էլեկտրոնային կառավարման հարթակների վերաբերյալ իրազեկության բարձրացում:	արդարադատության և մարդու իրավունքների շուրջ երկխոսությունների մեջ

քաղաքական երկխոսության և խորհրդատվական մեխանիզմների մեջ նրանց ներգրավման առումով:			
Գերակայություն 4. Աջակցել ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) քաղաքացիական հասարակության կողմից մոնիթորինգի իրականացմանը և ԵՄ-Հայաստան երկկողմ ՔՀԿ պլատֆորմի ստեղծմանը:			
- ՔՀԿ-ներն ունեն սահմանափակ կարողություններ՝ ՀԸԳՀ-ով սահմանված հիմնական պարտականությունների կատարումը վերահսկելու և կառուցողական աջակցություն ցուցաբերելու համար: - ԵՄ կարևորագույն ծրագրային փաստաթղթերի գերակայությունների շուրջ խորհրդատվական քննարկումները Հայաստանի ՔՀԿ-ների հետ կանոնավոր և համակարգված բնույթ չեն կրում: - Լեզվական արգելքը խոչընդոտում է հատկապես Հայաստանի շրջանների ՔՀԿ-ների	**4.1. Հայաստանի ՔՀԿ-ները կառուցողականորեն աջակցում են քաղաքական երկխոսությանը՝ ՀԸԳՀ-ի մոնիթորինգի գործընթացի շրջանակում:** **4.2 ՔՀԿ-ներն ամրապնդում են իրենց տեխնիկական կարողությունները՝ սահմանված կոնկրետ ոլորտներում ՀԸԳՀ-ի մոնիթորինգի իրականացման համար, այդ թվում՝ ժողովրդավարական հաստատություններ և կառավարման համակարգ, տնտեսական զարգացում և շուկայական հնարավորություններ, էներգաարդյունավետություն, շրջակա միջավայրի պահպանություն, գյուղատնտեսություն, սոցիալական և աշխատանքային հարցեր, տրանսպորտ:** **4.3. Հայաստանի ՔՀԿ-ներն իրազեկված են ՀԸԳՀ-ի նպատակների**	• Քաղաքական երկխոսություն, խորհրդատվություն և օժանդակություն • Կարողությունների զարգացում՝ քաղաքական երկխոսության հմտությունների, իրավապաշտպանության և փաստական հետազոտությունների իրականացման առումով: • ՀԸԳՀ-ի համար քաղաքացիական հասարակության գործիքակազմի մշակում և ներկայացում՝ ՀԸԳՀ-ի իրականացման վրա քաղաքացիական հասարակության ազդեցությունը մեծացնելու նպատակով:	• ՀԸԳՀ-ի մոնիթորինգի գործընթացում ՔՀԿ-ների աջակցման տեխնիկական գործիք, ԵՄ պատվիրակության անձնակազմ (քաղաքական և համագործակցության բաժիններ) • ՀԸԳՀ-ի իրականացմանն աջակցող մեխանիզմների միջոցով, օր.՝ հնարավոր ՀԸԳՀ գործիքը: • ՔՀԿ-ների կարողությունների զարգացման առաջիկա ԵՄ ծրագիրը (2019-2020թթ. Արևելյան հարևանության քաղաքացիական հասարակության գործիք):

ներգրավվածությունը ՀԸԳՀ գործընթացում: + ՀԸԳՀ- ն հնարավորություններ է ստեղծում քաղաքական երկխոսության մեջ քաղաքացիական հասարակության դերի ամրապնդման համար:	**մասին և ակտիվ դերակատարություն ունեն ԵՄ-Հայաստան երկկողմ ՔՀԿ պլատֆորմի ստեղծման գործում:** **4.4. ԵՄ-Հայաստան ՔՀԿ պլատֆորմը գործում է և արդյունավետ կերպով նպաստում է ՀԸԳՀ-ի ճանապարհային քարտեզի գերակա միջոցառումների վերհանմանը և ՀԸԳՀ-ի մոնիթորինգի իրականացմանը:** **4.5. ԵՄ ծրագրային փաստաթղթերը մշակելիս (օր.՝ տարեկան միջոցառումների ծրագրեր (ՏՄԾ), 2021-2024թթ. Միասնական աջակցության շրջանակ) ԵՄ-ն անպայման խորհրդակցում է Հայաստանի ՔՀԿ-ների հետ և փաստաթղթերի մեջ արտացոլում նրանց գերակայությունները:** **4.6. ՔՀԿ-ների իրազեկության մակարդակի բարձրացման արդյունքում ընդլայնվում է հասարակական իրազեկությունը ՀԸԳՀ-ի և Հայաստանում ԵՄ-ի կողմից իրականացվող գործողությունների մասին:**	• ՀԸԳՀ-ի մասին իրազեկության բարձրացման միջոցառումներ ՔՀԿ-ների կողմից • Եվրոպական լեզուների դասընթացներ ՔՀԿ-ների համար	

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՆԿԱԽ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՔՀԿ-ՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ			
Գերակայություն 5. Թիրախային ՔՀ կարողությունների զարգացում՝ քաղաքացիների հետ արդյունավետ համագործակցելու և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կայունությունն ապահովելու համար:			
- ՔՀԿ-ները մեծամասամբ հեռվացել են իրենց համախոհներից, որոնց շահերը ձգտում են ներկայացնել: - Թերացումներ կան ներքին կառավարման, քաղաքացիների և շահառուների նկատմամբ հաշվետվողականության առումով: - Մարզային ՔՀԿ-ները չունեն իրենց առաքելությունն իրականացնելու տեխնիկական կարողություններ, որովհետև տեղի է ունենում «ուղեղների արտահոսք» դեպի խոշոր ՔՀԿ-ներ կամ մայրաքաղաք (աշխատանքի անապահովության, աշխատավարձի տարբերությունների,	**5.1. ՔՀԿ-ները սովորել են և կիրառում են նորարարական մեթոդներ՝ իրենց համախոհների հետ հարաբերակցվելու և քաղաքացիների կարիքներին արձագանքելու համար:** **5.2. ՔՀԿ-ները բարելավում են իրենց ներքին կառավարումը, բարձրացնում թափանցիկությունն ու ֆինանսական հաշվետվողականությունը:** **5.3. Ամրապնդված են ՔՀԿ-ների ղեկավարման, ռազմավարական պլանավորման և կառավարման կարողությունները:** **5.4. ՔՀԿ-ները դառնում են ֆինանսապես կայուն և անկախ՝ տարբեր ֆինանսական մոդելների իրականացման միջոցով (սերտ համագործակցություն գործարար հատվածի հետ, դրամահավաք, սոցիալական ձեռնարկատիրության զարգացում և այլն):** **5.5. ԵՄ աջակցությունը հասանելի է Հայաստանի մարզերի քաղաքացիական հասարակության**	• Մինչև 2020թ. քաղաքացիական հասարակության ցանցի վերանայում և թարմացում (ներառյալ բաժանումը՝ ըստ գործունեության ոլորտի և ըստ տարածաշրջանի) • Կարողությունների զարգացմանն ուղղված թիրախային միջոցառումներ հետևյալ բնագավառներում՝ ժողովրդավարական կառավարում, հասարակական իրազեկում, հաղորդակցություն, շահերի պաշտպանություն, հաշվետվության չափորոշիչներ, ծառայությունների մատուցում, կազմակերպական և ֆինանսական կառավարում: • Ֆինանսական աջակցություն. - ՔՀԿ-ների հետևողական ֆինանսավորում՝ կենտրոնանալով կանանց և հասարակական կազմակերպությունների,	• Հայաստանի ՔՀԿ-ների մասնակցությամբ ընթացիկ և ապագա բոլոր ԵՄ ծրագրերը • ՔՀԿ-ների կարողությունների զարգացման առաջիկա ԵՄ ծրագիրը (2019-2020թթ. Արևելյան հարևանության քաղաքացիական հասարակության գործիք) • ՀԸԳՀ-ի քաղաքացիական հասարակության գործիք • Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության գործիքի ներքո Քաղաքացիական հասարակության կրթաթոշակների բաղադրիչ, Արևելյան գործընկերության երիտասարդության դեսպաններ, Արևելյան գործընկերության դպրոց:

զարգացման հեռանկարների և այլ պատճառներով): + Կարողությունների զարգացման ԵՄ ընթացիկ ծրագրերի շրջանակում հաջողվել է գնահատել գոյություն ունեցող ՔՀԿ-ների կարողությունների պահանջները:	**լայն շրջանակներին:**	երիտասարդ ակտիվիստների և սոցիալական ձեռնարկությունների վրա: - Թիրախային կարողությունների զարգացում և փոքր դրամաշնորհներ Հայաստանի մարզերի հասարակական նախաձեռնությունների, ոչ ֆորմալ կազմակերպությունների և ակտիվիստների համար: - Ապագա բոլոր երկկողմ և ոլորտային ծրագրերում կարողությունների զարգացման բաղադրիչի ընդգրկում: - Համաֆինանսավորման պահանջը պարտավորեցնում է տարբեր ուղիներով ֆինանսական միջոցներ հայթայթել և ապահովել ՔՀԿ-ների ծրագրերի շարունակականությունը: - Աջակցություն այն ծրագրերին, որոնք պարունակում են կազմակերպական կարողությունների զարգացման և նորարարության բաղադրիչ(ներ): - Իրականացման ժամկետի երկարաձգում, որը ՔՀԿ-ներին երկարաժամկետ գործողությունների պլանավորման հնարավորություն կտա:	

		- Կարողությունների զարգացման բոլոր ծրագրերում ենթադրամաշնորհային բաղադրիչի ընդգրկում • Հասարակայնության հետ կապերի բարելավմանն ուղղված աջակցություն՝ ՔՀԿ-ների տեսանելիությունն ապահովելու համար:	
«ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ» ԳԵՐԱԿԱ ՈԼՈՐՏՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ			
Գերակայություն 6. Աջակցել գենդերային հավասարությունը, երիտասարդության մասնակցությունը և ամենախոցելի խմբերի իրավունքների պաշտպանությունը խթանող քաղաքացիական հասարակությանը և ՔՀԿ կոալիցիաներին			
- Խոցելի խմբերը (երեխաները, կանայք, գյուղական բնակավայրերի երիտասարդությունը, հաշմանդամություն ունեցող անձինք և անապահով համայնքների բնակիչները) ներգրավված չեն քաղաքական երկխոսության մեջ: + Հայաստանի քաղաքական փոփոխությունները ճանապարհ են հարթել թափանցիկ ու ներառական կառավարման համար և հնարավորություն են տվել	**6.1. ՔՀԿ-ները գիտելիքներ են ձեռք բերում «իրավունքների վրա հիմնված մոտեցումների» վերաբերյալ և պատկերացում են կազմում տարբեր ոլորտների հիմնախնդիրների մասին:** **6.2. ՔՀԿ-ներն ընդգրկում են «իրավունքների վրա հիմնված մոտեցումները» իրենց ռազմավարությունների, ծրագրերի և ամենօրյա աշխատանքի մեջ:** **6.3. ՔՀԿ-ներն ուսումնասիրել են և կիրառում են կամավորների կառավարման, երիտասարդների ղեկավարման կարողությունների զարգացման լավագույն փորձը:** **6.4. ՔՀԿ-ները խթանում են**	• Քաղաքական երկխոսություն (բյուջետային աջակցության ծրագրերի, մարդու իրավունքների և արդարադատության շուրջ երկխոսությունների մեջ ՔՀԿ-ների ներգրավման միջոցով) • «Իրավունքների վրա հիմնված մոտեցման» կիրառման կարողությունների զարգացում և խոցելի խմբերի իրավունքների պաշտպանություն • Կամավորների կառավարման լավագույն փորձի փոխանակում	• ԵՄ պատվիրակության անձնակազմը՝ Հայաստանի քաղաքացիական հասարակության հետ աշխատող բոլոր ԵՄ ծրագրերի աջակցությամբ: • ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրեր և տեխնիկական աջակցություն • Հայաստանում «ԵՄ-ն հանուն երիտասարդության» ծրագիրը

համախմբելու ՔՀԿ-ներին մարդու իրավունքների հիմնախնդիրների շուրջ, որոնք այդպես էլ առաջ չէին մղվում կամ նախորդ կառավարության օրակարգում առաջնահերթ տեղ չէին զբաղեցնում:	**Հայաստանում աղքատության հաղթահարման վերաբերյալ հանրային քննարկումները և հիմնավորված պաշտպանում են աղքատության հաղթահարման համակողմանի պետական նախաձեռնությունները:** **6.5. ՔՀԿ-ները մշակում են են գենդերային հավասարությանն ուղղված ծրագրեր և պարբերաբար հավաքում գենդերային թեմայով վիճակագրական տվյալներ:**	• ՔՀԿ-ների տեխնիկական աջակցություն՝ գենդերային ծրագրերի մշակման, նորարարական տվյալների հավաքման և մոնիթորինգի գործիքների կապակցությամբ: • ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող բոլոր ՔՀԿ ծրագրերում պահանջվում է խթանել գենդերային հավասարությունը և երիտասարդության հզորացումը: • Ֆինանսական աջակցություն ամենախոցելի խմբերի շահերը պաշտպանող ՔՀԿ-ների և ՔՀԿ կոալիցիաների ծրագրերին	
«ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ» ԳԵՐԱԿԱ ՈԼՈՐՏՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ			
Գերակայություն 7. Աջակցել ՔՀԿ-ների, արհմիությունների, գործարարների միջև համագործակցությանը և գիտելիքների ու տեղեկատվության փոխանակմանը (այդ թվում՝ ՔՀԿ-ների ֆինանսական կրթություն և պետական-մասնավոր ոլորտների համար ծառայությունների մատուցում):			
- Չկա տեսլական, թե ինչու և ինչպես պետք է ՔՀԿ-ները համագործակցեն մասնավոր հատվածի հետ: - ՔՀԿ-ների մեծ մասի ֆինանսական գրագիտության	**7.1. ՔՀԿ-ներն ակտիվ համագործակցում են մասնավոր հատվածի հետ և ներգրավված են գործարար ու ներդրումային միջավայրի բարեփոխումների գործընթացներում:** **7.2. Ազդեցություն ապահովող**	• Ֆինանսական և ոչ ֆինանսական աջակցություն այն ՔՀԿ-ներին, որոնք ներգրավված են տնտեսական զարգացման մեջ (ներառյալ սոցիալական առաքելություն իրականացնող սկսնակ	• ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող, ՔՀԿ-ներին ուղղված կամ այլ ընթացիկ ծրագրեր • ԵՄ պատվիրակության անձնակազմը (քաղաքական և համագործակցության բաժիններ)՝ ոլորտի ՔՀԿ-ների կոնկրետ գործողությունների խթանման նպատակով, այդ թվում՝ տնտեսական

մակարդակը ցածր է: - Սոցիալական ձեռնարկատիրության վերաբերյալ հստակ քաղաքականության բացակայություն - ՔՀԿ-ները, որպես կանոն, պատկերացում չունեն մշակույթի և ստեղծագործական արդյունաբերության՝ որպես ներառական տնտեսական աճի խթանման մեխանիզմների մասին: - ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող, հանրային և ՔՀԿ ոլորտներին ուղղված ծրագրերի միջև համագործակցության բացակայությունը (հատկապես այն ծրագրերի, որոնք կառավարվում են ԵՄ պատվիրակության և Եվրոպական հանձնաժողովի/Բրյուսելի ԵՄ այլ մարմինների կողմից) հսկայական կորուստ է և երկարաժամկետ	**բիզնեսների զարգացում ՔՀԿ-ների և սոցիալական ձեռնարկությունների համար:** **7.3. ՔՀԿ-ները կարևոր ներդրում ունեն աշխատանքային իրավունքների շուրջ երկխոսության, ինչպես նաև ՔՀԿ-մասնավոր հատվածի միջև Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) և ՄԱԿ-ի բիզնեսի և մարդու իրավունքների առաջնորդող սկզբունքների շուրջ երկխոսության մեջ:** **7.4. Գյուղական բնակավայրերում և անապահով շրջաններում տուրիզմի խթանմամբ զբաղվող ՔՀԿ-ների հետ ԵՄ աջակցության ընդլայնում:** **7.5. Հայաստանի ՔՀԿ-ները գիտակցում են մշակույթի և ստեղծագործական արդյունաբերության դերը տնտեսության ու հասարակության մեջ և ակտիվորեն ներգրավված են այդ ոլորտում:**	ՔՀԿ-ները): • Տեխնիկական աջակցություն այն ՔՀԿ-ների կարողությունների զարգացմանը, որոնք ներգրավված են տնտեսական զարգացման, հանրային ապրանքների և ծառայությունների մատուցման, կրթության, մշակույթի և ստեղծագործական արդյունաբերության ոլորտներում: • ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի միջև տեղեկատվության փոխանակման և համագործակցության խթանում	զարգացման մեջ ՔՀԿ-ների դերի վերաբերյալ իրազեկման քարոզարշավներ, գործարար հատվածի հետ համագործակցության հնարավորություններ, թիրախային ուսուցում և վերապատրաստում տարբեր ոլորտներում ԵՄ ղեկավարների կողմից, ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող տարածաշրջանային և երկկողմ ծրագրերի միջև համագործակցություն • ՔՀԿ-ՏԻՄ ծրագրի 2019թ.-ի բյուջեն • Հայաստանում «Ստեղծագործ Եվրոպա» ծրագիրը • 2019թ.-ի տարեկան միջոցառումների ծրագիրը • Սոցիալական ձեռնարկություններին ուղղված առաջիկա աջակցությունը

ազդեցություն կարող է ունենալ:			
«ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ԳԵՐԱԿԱ ՈԼՈՐՏՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ (ԷՆԵՐԳԱՄՊԱՄԱՐԿՈՒՄ, ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ,ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ)			
Գերակայություն 8. Աջակցել շրջակա միջավայրի պահպանության, էներգաարդյունավետության և կլիմայի փոփոխության բնագավառներում քաղաքացիական հասարակության ներգրավմանը			
- ՔՀԿ-ները, ներառյալ բնապահպանական ՔՀԿ-ները, չունեն ընդհանուր պատկերացում Հայաստանի կարևորագույն բնապահպանական մարտահրավերների մասին: - ՔՀԿ ոլորտը և տեղական կառավարման մարմիններն իրազեկված չեն բնապահպանության ոլորտի խնդիրների մասին և չունեն դրանց լուծման կարողությունները: - ՔՀԿ-ները բավարար իրազեկված չեն և չեն կիրառում բնապահպանական փորձը: + Նոր կառավարությունը հանձն է առել	**8.1. ԵՄ համագործակցությունը շրջակա միջավայրի պահպանության բնագավառում ուժեղանում է ԵՄ-Հայաստան համագործակցության գերակայությունների մոնիթորինգի և իրականացման գործում ՔՀԿ-ների դերի ամրապնդմամբ:** **8.2. ՔՀԿ-ներն ակտիվորեն ներգրավված են շրջակա միջավայրի պահպանության պետական քաղաքականության մոնիթորինգի գործընթացում՝ շեշտը դնելով համայնքային մակարդակով մոնիթորինգի իրականացման և ազգային մակարդակով քննարկումներին մասնակցության վրա:** **8.3. ՔՀԿ-ների կարողությունների զարգացում՝ Հայաստանի կողմից միջազգային պայմանագրերի,**	• ԵՄ-ի և ՔՀԿ-ների, կառավարության և ոլորտում աշխատող ՔՀԿ-ների միջև կառուցվածքային երկխոսության ձևավորում • Ոչ ֆինանսական աջակցություն (բնապահպանական ՔՀԿ-ների կարողությունների զարգացում, ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակում ՔՀԿ-ներին խորհրդաժողովներին և ղեկավար հանձնաժողովներին հրավիրում, ԵՄ կայուն էներգիայի շաբաթի շրջանակում ՔՀԿ-ների ներգրավում կանոնավոր քաղաքական երկխոսության մեջ, ՔՀԿ-ների միջև մասնագիտական տեղեկատվության	• ԵՄ պատվիրակության անձնակազմը՝ ընթացիկ ՔՀԿ ծրագրերի աջակցությամբ: • ՔՀԿ-ՏԻՄ ծրագրի 2019թ.-ի բյուջեն • 2019թ.-ի տարեկան միջոցառումների ծրագիրը

բնապահպանական կառավարման ոլորտի բարեփոխումը, որը կօգնի համախմբել և ներգրավել ՔՀԿ-ներին ու ակտիվիստներին մի շարք բնապահպանական խնդիրների վերահսկման և պաշտպանության գործընթացներում (օր.՝ արդյունահանող արդյունաբերության / հանքարդյունաբերության ավելի համակարգված մոնիթորինգ):	**պարտավորությունների և բնապահպանական չափորոշիչների կատարման մոնիթորինգի նպատակով (մասնավորապես տրանսպորտի ոլորտում ավտոմեքենաներից վնասակար նյութերի արտանետման կարգավորում):** **8.4. Հայաստանի ՔՀԿ-ներն ուսումնասիրել են բնապահպանական փորձը և կիրառում են այն իրենց ռազմավարությունների և ամենօրյա աշխատանքների մեջ:** **8.5. ՔՀԿ-ներն ակտիվորեն պաշտպանում են վերականգնվող էներգիայի աղբյուրների և մաքուր տեխնոլոգիաների ներդրումն ու օգտագործումը:**	փոխանակման բարելավում՝ արտացոլելու մարգինալացված համայնքների մասնակցությունը էներգաարդյունավետության, շրջակա միջավայրի պահպանության և կլիմայի փոփոխության հետ առնչվող աշխատանքներում): • ՔՀԿ-ների ռազմավարությունների և ամենօրյա աշխատանքի մեջ շրջակա միջավայրի անթերի պահպանության լավագույն փորձի ցուցադրում • ՔՀԿ-ների ծրագրային առաջարկների մեջ բնապահպանական կայունության բաղադրիչի ընդգրկման պահանջ • Ֆինանսական աջակցություն (թեմատիկ հայտահրավերների միջոցով):	

ՄԱՍ III. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գործընթացի ցուցանիշներ		
ՑՈՒՑԱՆԻՇ	ԹԻՐԱԽ	ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Ճանապարհային քարտեզի հետ կապված գործընթացում անդամ պետությունների ներգրավում	Հայաստանում ներկայացչություն ունեցող անդամ պետություններն ակտիվորեն ներգրավված են ճանապարհային քարտեզի հետ կապված գործընթացում:	Հայաստանում ներկայացչություն ունեցող ԵՄ անդամ պետությունները մասնակցեցին խորհրդատվական հանդիպումներին և ներկայացրեցին ճանապարհային քարտեզի նախագծի վերաբերյալ իրենց դիտողությունները: 2019թ.-ի մարտի 5-ին ճանապարհային քարտեզը արժանացավ Հայաստանում ներկայացչություն ունեցող ԵՄ անդամ պետությունների հավանությանը և ուղարկվեց Ռուսաստանում և Ուկրաինայում Բելգիայի և Դանիայի դեսպանություններին, որոնք ներկայացնում են նաև Հայաստանը:
Անցկացված խորհրդատվական հանդիպումների քանակը և որակը Ճանապարհային քարտեզի խորհրդատվական քննարկումներին մասնակցած ՔՀԿ-ների քանակը և բազմազանությունը (տարածքային, ոլորտի, կարողությունների առումով)	Ճանապարհային քարտեզի շուրջ խորհրդատվական քննարկումներ տեղական ՔՀԿ-ների լայն շրջանակի հետ, որն, ի վերջո, բերում է մշտական և կառուցվածքային երկխոսության:	2018թ.-ի հունիսի 28-ին և սեպտեմբերի 14-ին անցկացվեցին երկու խորհրդատվական հանդիպումներ, որոնք վերաբերում էին ճանապարհային քարտեզի նախապատրաստմանը: Ճանապարհային քարտեզի գերակայությունների վերաբերյալ նիստերին հետևեցին տարբեր թեմաների շուրջ ֆոկուս խմբերը, այդ թվում՝ գենդերային հավասարություն և կանանց ներգրավում (1), շրջակա միջավայրի պահպանություն (2), հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները (3), երիտասարդության ներառումը (4), լրատվամիջոցների և մշակութային կազմակերպությունների հետ համագործակցությունը (5): Բացի դրանից՝ ճանապարհային քարտեզը շրջանառվեց էլ. փոստով 49 ՔՀԿ-ների միջև: Ներկայացվեցին 10 ընդհանուր մեկնաբանություններ, որոնց մի մասն ընդգրկվեց նախագծի մեջ: Ընդհանուր առմամբ, 149 ՔՀԿ ներկայացուցիչ իր ներդրումն ունեցավ ճանապարհային քարտեզի խորհրդատվական գործընթացում: Բացի ավանդական ՔՀԿ ներկայացուցիչներից՝ մասնակցեցին նաև ոչ ֆորմալ ակտիվիստներ, լրատվամիջոցների, գիտահետազոտական կենտրոնների և ՔՀԿ պլատֆորմների ներկայացուցիչներ:

Ճանապարհային քարտեզն անմիջականորեն փոխլրացնում է ԵՄ գործընթացները և այլ դոնորների, գործընկերների գործողությունները:	Ճանապարհային քարտեզները փոխլրացնում են առնչվող գործընթացները, ներառյալ մարդու իրավունքների և ժողովրդավարության ազգային ռազմավարական ծրագրերը, զարգացման «իրավունքների վրա հիմնված մոտեցումը», գենդերային հավասարության ապահովման միջոցառումների ծրագրերը և այլն:	Ճանապարհային քարտեզը պաշտպանում է ԵՄ մարդու իրավունքների և ժողովրդավարության 2015-2019թթ. միջոցառումների ծրագրի գերակայությունները, ԵՄ մարդու իրավունքների ուղեցույցները և Համընդհանուր պարբերական դիտարկման առաջարկությունները: Այն նաև համապատասխանում է ԵՄ գենդերային հավասարության ապահովման 2016-2020թթ. II միջոցառումների ծրագրին: Ճանապարհային քարտեզը կապված է ԵՄ երկկողմ, ոլորտային և տարածաշրջանային համագործակցության պլանավորման հետ: ԵՄ պատվիրակությունն օգտագործում է ամեն հնարավորություն՝ նոր ճանապարհային քարտեզը ներկայացնելու և Հայաստանում գործունեություն ծավալող այլ խոշոր դոնորների (օր.՝ ԱՄՆ) հետ համակարգված համագործակցելու համար: Վերջինիս նպատակը քաղաքացիական հասարակության աջակցության շուրջ համագործակցության ընդլայնումն է: